

Գրական Թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տղազրվում է ՀՀ Մեակույթի նախարարության աջակցությամբ

www.grakantert.am



Էդվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ
ՀԳՄ նախագահ

մեջ: Բաժանարար գծերն ավելի են շեշտել ու շեշտում անհանդուրժողականության, ազգային դիմադրության ներուժի անկման ու անպատասխանատվության մթնոլորտի ձևավորումը, որից օգտվեց թշնամին:

Տարին անդառնալի զոհերով, ցավերով, դառնություններով այնպես է խեղդում մեզ, որ այլ թեմաներով խոսելու ցանկությունը կորսվում է, բայց գրական կյանքը շարունակվել է, Գրողների միությունը 2020 թվականին հնարավորինս աշխատել է մասնակցություն ունենալ գրողական խնդիրների լուծման գործում: Հենց տարեսկզբից մեր ծրագրերն իրագործվել են տարբեր ուղղություններով:

2020 թվականին Միությունը աշխատել, գործել և հատկապես մինչև մարտի

թարգմանիչ Շանթ Մկրտչյանը, նոր թարգմանական գրքերով ու հեղինակային երգերով ներկայացավ Աշոտ Ալեքսանյանը: Այդ ընթացքում ՀԳՄ-ի գրական գործունեության մասին մոտ տասը live (ուղիղ եթեր) են ունեցել Ֆեյսբուքում՝ ամեն շաբաթ ներկայացնելով, թե ինչ ընթացքի մեջ է գրական դաշտը:

Կորոնավիրուսի ընթացքում մայիս, հունիս, հուլիս ամիսներին, միացյալ հանդիպումներ կազմակերպեցինք գրադարանների, թանգարանների հետ, լույս տեսած գրքերի, հոբելյանների առիթով: Միջոցառումներ կազմակերպվեցին Արվեստի և գրականության թանգարանում՝ Ղազարոս Աղայանի ծննդյան օրվա, Չարենցի տուն-թանգարանում, Իսահակ-



Գրիգոր ԶԱԽԱՐՅԱՆ
ԱՄԱՆՈՐՅԱԿ
ՊԱՏՎԻՐԱՆ

Մեր ծեր, բարի երկրագունդն իր հերթական պտույտն է ավարտում, ու միջոցը լույս, հույս է սփռում Հայոց անդամատանում՝ Արարատյան ուստանից ընդհուպ Մշո դաշտահովիտն ու Ջեյթունի լեռնակարկառները: Ամանորի այս գիշերը մենք հավատում ենք մեր անցյալին, մեր ներկային ու հատկապես՝ ապագային: Այդ զորեղ, աներեր հավատը մեզ հայոց զինվորն է հաղորդում, որ պատմության քառուղիներում մաքառել, բայց երբեք չի պարտվել, թշնամու արյունաշունչ երախից խել, մեզ է հասցրել մեր լեզուն, երկնառաք գրերը, աստվածներին ու աստվածությունները, վերջապես ամենաթանկն ու ամենասիրելին՝ հողը, որի վրա աներեր կանգնում, հույսով ենք նայում պատմական արդարության վերականգնմանը:

Միայն թե հայ զինվորը սուկ ազգային ռազմազգեստ հագած հուրհեր ու հրաչ վահագնածինը չէ, հայ զինվորը է՛ս են, դո՛ւ ես, մենք բոլորս ենք, մենք բոլորս մեկընդմիջտ պիտի հավատանք մեր ուժերին, պիտի մեկտեղենք մեր ուժերն ու հաղթենք:

Երջանկահիշատակ Գերսամ Ահարոնյանն ամեն Ամանորի բաժակ էր բարձրացնում, մաղթում. «Մյուս տարի՝ Վանում»:

Ես իմ բաժակը խփում եմ նրա բաժակին, հավելում. «Մյուս տարի՝ Շուշիում»:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Գրական թերթի»
հաջորդ համարը լույս
կտեսնի 2021 թվականի
փետրվարի 5-ին:

2021-ը ամենքիս կամքով լինի ապրեցնող

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ» - Պարոն Միլիտոնյան, անցնող տարին դաժանորեն ճակատագրական եղավ Արցախի և Հայաստանի համար: Օրեր անց պատմություն կդառնա 2020 թվականը, մինչ այդ փորձենք ամփոփել այս դժվար տարում ՀԳՄ գործունեությունը:

Էդվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ - 2020 թվականը մեր պատմության մեջ կհիշատակվի ամենաճանր տարիներից մեկը և՛ կորոնավիրուսի, և՛ Արցախի պատերազմական գործողությունների առումով:

Սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը տևած պատերազմի ծանր ընթացքի մասին խոսելը բոլորիս համար դժվար է, դա լուրջ քննարկումների նյութ է: Ամբողջ հայության՝ Արցախի, Հայաստանի, Սփյուռքի համար մեծ փորձություն էր: Ողջ ժողովուրդը կամքը լարել էր՝ պայքարելու, հաջողության հասնելու, սակայն Թուրքիայի մասնակցությունը պատերազմին՝ զիջատիչ վարձկանների ընդգրկումով, և Ադրբեյջանի՝ իր ողջ զինանոցով հարձակումը Արցախի վրա որոշեցին պատերազմի ելքը: Իրողությունն այն է, որ ինչքան էլ մեր զինվորների դիմադրությունը, հերոսականությունը բարձր լիներ, որոշիչ եղավ նոր տեխնոլոգիաների, նոր զինատեսակների առկայությունը: Սա ևս պետք է հավելյալ ազդակ լինի, որ երբեք որևէ պատերազմից հետո չհանգստանանք, հատկապես եթե հաղթած ենք լինում: Հաղթության դափնիների վրա հանգիստ չքնենք, քանզի պատերազմից հետո ամենամեծ ճշմարտությունն այն է, որ պիտի պատրաստվենք նոր պատերազմի: Առայժմ սա է մեզ տրված մեր տարածաշրջանում: Մենք թերացել ենք ճշգրիտ և թշնամուն համարժեք նոր տեխնոլոգիաներով պատերազմին պատրաստվելու գործում: Ակնհայտ է և անժխտելի Հայաստանի և Արցախի կառավարությունների տապալումը: Նախկին կառավարողների պատասխանատվությունն էլ փոքր չէ այս դառը պարտության

կեսը լիարժեք իրագործել է այն ծրագրերը, որոնց մասին տարեսկզբից հայտարարել ենք՝ գրական հանդիպումներ, Գիրք նվիրելու օր, տարբեր ստեղծագործական հարցերի, գրքերի քննարկումներ, շնորհանդեսներ, մրցանակների հանձնում և այլն: Մասնավորապես՝ տարեսկզբին հանձնեցինք 2019 թվականի ՀԳՄ ամենամյա, ինչպես նաև «Հրանտ և Մանուշակ Սիմոնյան» մրցանակները, ամփոփեցինք Պաշտպանության նախարարության հետ հայտարարած մրցանակաբաշխության արդյունքները, 2020 թ. փետրվարի 19-ին Հայաստանում, հատկապես Երևանում, ինչպես նաև Թբիլիսիում, Արցախում Գիրք նվիրելու օրը բազմազան միջոցառումներ կազմակերպեցինք, ֆլեշմոբ եղավ Գրողների միության Պոեզիայի պուրակում, որտեղ գրողները և ՀԳՄ աշխատակիցները հարյուրավոր գրքեր նվիրաբերեցին ընթերցողներին, 30-ից ավելի դպրոցներում գրողները հանդիպումներ ունեցան աշակերտների հետ, նշվեց Հովի. Թումանյանի ծննդյան օրը: Այդ ոգով գործեցին նաև մարզերի գրական բաժանմունքները:

Մարտի կեսերից արդեն կորոնավիրուսի պատճառով ունեցանք դժվարություններ՝ Գրողների միությունում լայն քննարկումներ, հանդիպումներ, շնորհանդեսներ կազմակերպելու առումով: Ուստի ՀԳՄ Կլոր սրահում նախաձեռնեցինք գրողների ու թարգմանիչների հետ «Դիմակահանդես» խորագրով առցանց հանդիպումներ, քննարկումներ, որոնք ներկայացվեցին Ֆեյսբուք սոցիալական ցանցում: Մասնավորապես՝ քննարկվեց Ներսես Խառատյանի «Պատասխան տալու ժամանակը» վեպը, տեղի ունեցավ «Արդի հայ գրողներ և բանաստեղծներ» քրդերեն ժողովածուի շնորհանդեսը, ինչպես նաև հանդիպում այդ ժողովածուի թարգմանիչ Մռազե Զամալի հետ, «Ֆերնանդո Պեսոսայի քնարերգությունը» հայերեն ժողովածուն ներկայացրեց

յանի անվան գրադարանում և Իսահակյանի տուն-թանգարանում՝ Ավետիք Իսահակյանի հատորների լույսընծայման և ծննդյան 145-ամյակի առիթով: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում նշվեց Հենրիկ Էդոյանի 80-ամյակը, ՀԳՄ Կլոր սրահում տեղի ունեցավ հալեպահայ գրող Հակոբ Միքայելյանի «Ճակատագրի սև կատուն» վեպի շնորհանդեսը, Գրականության ինստիտուտի հետ հեռավար նշեցինք Ղևոնդ Ալիշանի հոբելյանը, Համազգային թատրոնում Ռազմիկ Դավլոյանի ծննդյան 80-ամյակը: Ունեցել ենք մի շարք թեմաներով քննարկումներ, հատկապես գրականության և լեզվի դասագրքերի առնչությամբ ՀԳՄ վարչության նիստում արծարծված մեր առաջարկությունները, դիտողությունները ուղարկել ենք ԿԳՄՍ նախարարություն, այդ քննարկումներին բազմաթիվ էջեր է նվիրել «Գրական թերթը»: Բացի նշվածներից, կազմակերպվել են այլ հանդիպումներ ու գրքերի շնորհանդեսներ, որոնք համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով եղել են հիմնականում ոչ մարդաշատ:

Պետք է նշեմ, որ որոշակի աշխատանք է կատարվել թարգմանական ծրագրերի առումով: Տարեսկզբին մասնակցել ենք «Ղազախստանի բանաստեղծների և արձակագիրների անթոլոգիայի» հրատարակմանը, որի շնորհանդեսը տեղի ունեցավ Ղազախստանի դեսպանության հետ համատեղ: Ի դեպ, Ղազախստանի հետ մեր ծրագրերը շարունակվում են. անցյալ տարվա տարեվերջին Ղազախստանում իմ առաջաբանով հրատարակվեց հայ դասական բանաստեղծների անթոլոգիա: Աբայի 175-ամյակին նվիրված հեռավար հանդիսության ընթացքում, որին զեկուցումով մասնակցեցի նաև ես, Ղազախստանի

Շարունակությունը էջ 2

Սկիզբը էջ 1

2021-ը ամենքիս կամքով և հոյսով

գրողների միության քարտուղարը հայտարարեց, որ ժամանակակից հայ գրողների անթուղոգիան են պատրաստում: Իրանում հրատարակվել են Մկրտիչ Սարգսյանի, Սամվել Կոսյանի ժողովածուները, վերահրատարակվել է նվաստիս «Հնարամիտ բաղի ճամփորդությունը» վեպը՝ Անդրանիկ Խեչումյանի թարգմանությամբ: Պատրաստ է տպագրության նաև Ավետիք Իսահակյանի արձակ երկերի ժողովածուն՝ Գարուն Սարգսյանի թարգմանությամբ, իմ առաջաբանով: Գերմանիայում տպագրության է պատրաստվում հայ ժամանակակից գրողների անթուղոգիան, որը կազմել է Ագապի Մկրտչյանը: Ուկրաինայում հրատարակվել է Վարդան Գրիգորյանի «Մանյա այրք» վեպը՝ Օլեքսանդր Բոժկոյի թարգմանությամբ: Նշեն, որ Ուկրաինայի գրական մամուլը պարբերաբար հրատարակում է մեր գրողների ստեղծագործություններից Բոժկոյի թարգմանությամբ: Լեհաստանում Կալինա Զիլոյան մշտապես ժամանակակից հայ բանաստեղծների ստեղծագործություններն է տարածում, ներկայացնում տարբեր հանդիպումների ժամանակ: Պիտի հրատարակենք Լիտվայի բանաստեղծների անթուղոգիան, նրանք էլ պատրաստում են մեր գրողների անթուղոգիան: Վերջինս պետք է հրատարակվեր այս տարի, սակայն կորոնավիրուսի հետևանքով առաջացած ֆինանսական խնդիրների պատճառով հետաձգվել է: Պիտի խոստովանենք, որ ամբողջ աշխարհում էլ համավարակը ծանր հետք է թողել, աշխարհի գրական կազմակերպությունները, ավանդական փառատոների կազմակերպիչները պլանավորել էին միջազգային փառատոներ, հանդիպումներ, գրքերի ցուցահանդեսներ իրականացնել, սակայն դրանց մի մասը չկայացավ, մի մասն էլ առցանց եղավ: Այնպես որ, այդ առումով տարին շատ ծանր էր ամբողջ աշխարհի գրական կազմակերպությունների համար:

Կորոնավիրուսի հենց առաջին օրերին Գրողների միությունը կապի մեջ է եղել գրողների հետ, տեղեկացել նրանց առողջական վիճակից, պարենային և ֆինանսական որոշակի աջակցություն հատկացրել Երևանի և մարզերի գրողներին: Ծաղկաձորի ստեղծագործական տունն ամբողջությամբ հատկացված էր մեկուսացածներին: Դա մեր գրողների տուրքն էր համավարակի դեմ պայքարում:

Կորոնավիրուսը ՀԳՄ-ի վրա էլ տնտեսապես շատ ուժեղ ազդեց, չի գործել «Բոհեմ» թատրոնը, այլ վարձակալներ ևս, բայց հիմնականում գրական գործունեությունը շարունակվեց, մամուլը հրատարակվեց, գրական բաժանմունքները շարունակեցին իրենց գործունեությունը, պահպանվում են միջազգային կապերը: Աջակցել ենք Շիրակի գրական բաժանմունքին՝ ամառվա ջրհեղեղի պատճառով վնասը վերացնելու և հետագա հեղեղներից խուսափելու գործում:

ԳԹ - Պատերազմի օրերին ի՞նչ մասնակցություն ունեցավ Գրողների միությունը, ինչպիսի՞ գործողություններ իրականացվեցին ի նպաստ մեր պայքարի:

Է.Մ. - 2020 թ. ամենածանր հարվածը սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը տևած պատերազմն էր: Գրողների միությունը հնարավորությունների սահմաններում փորձել է ամեն կերպ օգտակար լինել Արցախի պայքարին: Մասնավորապես՝ «Նոր գիրք» գրախանութում թե՛ ՀԳՄ-ի, թե՛ գրողների հրատարակած գրքերը դրվել են վաճառքի, որից ստացված ամբողջ գումարը հատկացվել է հատկացվելու է «Հայաստան» համահայկական հիմնադրամին, ՀԳՄ Կլոր սրահում քողարկիչ ցանցեր գործելու աշխատանքին իրենց նպաստը բերեցին կին գրողները, ՀԳՄ ճեմասրահում տեղի ունեցավ նկարների ցուցահանդես-վաճառք «Գրող-նկարիչները բանակին» խորագրով, նկարների վաճառքից գոյացած հասույթը փոխանցվել է «Հայաստան» համահայկական և «Աջակցություն զինվորին» հիմնադրամ-

ներին: Ծաղկաձորի ստեղծագործական տանն ապաստան է գտել գրեթե 90 արցախցի մանուկ ու կին: Հարողից և Շուշիից դեռևս մնացողներ կան այստեղ: ՀԳՄ-ն գումար է փոխանցել «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Մեր գրողները բազմաթիվ հանդիպումներ են ունեցել զորամասերում, հիվանդանոցներում՝ վիրավոր զինվորների հետ:

Այդ ընթացքում գրական մամուլում, հատկապես «Գրական թերթում» թղթային և առցանց տարբերակներով հրատարակվել են բազմաթիվ գրողների հոդվածներ, ստեղծագործություններ, էսսեներ, ԶԼՄ-ներում գրողները հանդես են եկել հարցազրույցներով, իրենց նկատառումներով. մեր գրական կազմակերպությունը այդ օրերին շատ լարված աշխատում էր:

ԳԹ - Սոցիալական ցանցերում երբեմն-երբեմն բարձրաձայնում են, թե ինչու մտավորականությունը չի հայտնում իր կարծիքը տեղի ունեցող իրադարձությունների շուրջ: Ի՞նչ կասեք այս առումով:

Է.Մ. - Պատերազմի հաջորդ իսկ օրից և՛ «Գրական թերթում», և՛ ԶԼՄ-ներում, և՛ սոցիալական ցանցերում մեր գրողները ելույթներ են ունեցել և ունենում՝ հայտնելով իրենց կարծիքը: Պարզապես երևի շատերը չգիտեն, որ այդ մարդիկ գրող են: «Գրական թերթը» մշտապես անդադար չի և՛ պատերազմի ընթացքին, և՛ պատերազմից հետո իրավիճակին: Ովքեր ծանոթ են, կիմանան՝ ինչ է գրվում, ինչ են ասում: Այնպես չէ, որ բոլորը միանշանակ մի կարծիք ունեն: Ոմանք շտապ պահանջում են վարչապետի և կառավարության հրաժարականը, ոմանք զգուշացնում են նախկինների վերադարձի ուրվականով, ոմանք, քաղաքական անցուդարձից հոգնած, լռում են կամ խոսում տարբեր միջավայրերում, ոմանք, որոշակի հեռանկար չտեսնելով, կամուկացի մեջ են: Սակայն մի բան հաստատ է՝ փոփոխության պահանջ կա, այս հեղձուկ ճգնաժամից օր առաջ դուրս գալու, մկանների լարումով, սթափությամբ, մեզ պարտադրված նոր իրողությունը գնահատելու կամքով ոտքի կանգնելու: Մեր փոխարեն մեր սահմանը ռուսական զորքը առայժմ կպաշտպանի, բայց մեր փոխարեն չի արարելու մեր ոգեղեն, իրական ներկան ու ապագան: Այսօր հնարավորությունները կան կարծիքներ հայտնելու ոչ միայն «Գրական թերթում»:

Ովքեր ասում են՝ մտավորականների խոսքը չի լսվում, գիտակցում են, թե ոչ, բայց հենց իրենք են մտավորականներ, ուրեմն՝ իրենց խոսքը ինչո՞ւ չեն ասում: Մեր մտավորականները, ովքեր խոսք, կարծիք ունեն ասելու, հրապարակում են, իսկ ով էլ չի ասում, դա էլ է կարծիք: Պարզապես պետք է ընդունենք, որ երբ որոշակի լարված վիճակներ են առաջանում, հանկարծ հիշում են մտավորականներին, իսկ երբ այդ լարումն անցնում է, խաղաղ ժամանակներում մտավորականին ոչ ոք չի հիշում: Մեր հանրապետության բյուջեն լավագույնս խոսում է այդ մասին: Բյուջեում գիտության, մշակույթի մասնահանման տոկոսն արդեն վերաբերմունք է մտավորականությանը: Եվ հիմա մտավորականությունից անվերջ պահանջել, թե նա ամեն կուսակցության կամ ամեն խմբի առաջ, ամեն մի միջոցառման ժամանակ պիտի մի դեմքով գա, կանգնի ու խոսի, ինձ ստիպում է հիշել այն ժամանակները, երբ չկային սոցցանցեր, երբ մամուլը ազատ չէր, երբ հեռուստատեսությունը ճանապարհ չէր տալիս ու հազիվ առիթ էր լինում տարեկան մի ժողովում խոսել կամ չխոսել: Հիմա ամեն օր են խոսում: Եթե որևէ մեկը չի ուզում նկատել, Աստված իր հետ, բայց մտավորականի ասածն էլ պիտի ընկալել, պիտի հասկանալ, պիտի ընդունել, որ կա նաև այսպիսի կարծիք, այսպիսի առաջարկություն, գուցե իրարամերժ: Պարտադիր չէ, և հնարավոր էլ չէ, որ բոլորը մի կարծիք ունենան, և բոլորից պահանջել, որ այսպես պիտի մտածել, քարացած կաղապար է: Նույն ժամանակահատվածում ապրող Տոլստոյը և Դոստոևսկին նույն հարցի վերաբերյալ չունեին նմանատիպ դիրքորոշում, վերաբերմունք:

Կրկնում եմ՝ չի կարելի մեղադրել, թե մտավորականը չի խոսում: Նրանք ելույթներ են ունենում, հրապարակում են իրենց մտահոգությունները: Ես նոյեմբերի 11-ից ֆեյսբուքային իմ էջում իմ առաջարկությունները գրել եմ, «Գրական թերթում» հրատարակել եմ, տարբեր հարցազրույցներով խոսել եմ: Ես և՛ իմ անունից եմ խոսում, և՛ նաև որոշակիորեն ներկայացնում եմ, որ գրողական մթնոլորտում կան նաև այսպիսի կարծիքներ: Բայց ես բոլորի փոխարեն խոսելու իրավունք չունեմ: Ամեն մարդ իր կարծիքը ազատորեն հայտնում է, և դա է ճշմարտությունը: Ի դեպ, ՀԳՄ-ն վերջին 25 տա-

րում, որքան հիշում եմ, որևէ քաղաքական իրավիճակի մասին միասնական հայտարարություններ չի հրապարակել: Նախորդ նախագահները իրենք ներկայացրել են իրենց դիրքորոշումները:

Առաջինը, որ ասվել է, հետևյալն է՝ Ազգային ժողովը՝ մեր պետության իրավասու մարմինը, պատերազմից առաջի, պատերազմի ընթացքի և պատերազմից հետոյի իրադրության մասին պիտի գումարեր արտահերթ նիստեր, համադրեին և՛ նախկին ու ներկա նախագահների խոսքերը, և՛ ներկա վարչապետի կարծիքները, եթե հարգում էին մեր պետական մարմինը, գային, քննարկեին, իրար երեսի ասեին ճշմարտությունը: Թե չէ՝ նրանք ասում են՝ վարչապետը սխալ է, վերջինս նրանց սխալն է ասում, և այդպես օդի մեջ իրար հեռահար ռեֆերություններ են անում, բայց որևէ լուրջ, կոնկրետ եզրակացության չեն հանգում, հասարակայնությունը չի իմանում՝ ո՞վ ճիշտ ասաց, ո՞վ՝ սխալ, արդյո՞ք 25 տարի միջազգային դիվանագիտական հանրույթը մեզ պարտադրում էր յոթ շրջանների վերադարձնելը: Այդ մասին պիտի հստակ ասվեր, որ պետք է ժողովուրդը իմանար, չմտածե՞ր՝ սա դավաճան է, նա հերոս է, և այսպես դավաճան-հերոս փնտրելով՝ վերածվի փտորված օրգանիզմի: Ազգային ժողովը, էլի եմ պնդում, նախ և առաջ պիտի այդ հանդիպումը կազմակերպեր, կլիներ բաց թե փակ, թող իրենք որոշեին, բայց որոշակի բաներ, կարծում եմ, ժողովուրդը պիտի իմանար, և այնտեղ պիտի ներկա լինեին նաև ոչ խորհրդարանական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, և լինել իսկապես համատեղ մի քննարկում: Հիմա չկա այդ քննարկումը, հիմա կա կամ Հրապարակում, կամ տարբեր միջավայրերում:

Մեր գրողները բոլոր հնարավորություններն ունեն և ասել են իրենց կարծիքները, ամեն մեկը տարբեր, նույնիսկ հակընդդեմ: Այնպես որ, ասել, թե մտավորականությունը ճայն չի հանում, մեծ սխալ է, ուղղակի այդ ձայնը ինչ-որ մեկին դուր կգա թե չի գա, այ՛, սա է հարցը: Ստեղծագործող մտավորականի խոսքը ճանաչելու համար, հատկապես՝ գրողի, նրա գրքերը պիտի կարդալ: Ի վերջո, գրողի հիմնական գործը գրականությունն է, այդ գրականությունը պիտի ընթերցեին, այդ գրականությունից պիտի ստանային ժամանակի որոշակի բնութագիր, մարդու հոգեբանություն, լեզվամտածողություն, տաճանախներ, հոգսեր և այլն: Չպետք է սպասել, որ հենց վիճակը լարվի, գրողը պիտի ելնի, ասի՝ այսպես արեք: Ես շատ լավ հիշում եմ 88-ի հանրահավաքները. որևէ հայտնի գրողի կարծիք այնտեղ հալած յուղի տեղ չի ընդունվել՝ կամ ծափահարել են, կամ մի քանի օր հետո դավաճան են համարել: Մշտապես այդպես է:

Ի դեպ, գրողն իր խոսքն է ասում, մի ուրիշ քաղաքագետ, մասնագետ կարող է ավելի հետաքրքիր վերլուծություն անել: Այս հարցերի վերաբերյալ դիվանագետը կարող է ավելի ասել, քան գրողը, որովհետև նա ավելի ծանոթ է և՛ դիվանագիտական արխիվներին, և՛ պատմությանը, և՛ ներկային, և թերևս ինքը կարող է ներկայացնել, թե որտեղ են մեր դիվանագիտական վրիպումները, որտեղ են մեր քաղաքագիտական մտքի թերությունները, որտեղ են մեր հոգեբանության այն վտանգավոր խոսքերը, որտեղ մենք անընդհատ կարող ենք սխալվել: Չպետք է մտածենք, թե այնպիսի ճշմարտություններ ենք բարբառում, որոնք ի վերուստ տրված են մեզ, ո՞չ: Այնպես որ, այս վիճակը խորը քննարկման, վերլուծության կարիք ունի: Ամեն մեկը՝ հին թե նոր, պետք է քննի իր մեղքի չափը և խոստովանի ժողովուրդին, ուրիշին մեղադրելուց առաջ մտածի, թե ինքը ինչով է թերացել, և ըստ այդմ ամեն մեկը որոշի՝ մտ՞ում է, թե՞ ոչ, համահունչ է պաշտոնին, արե՞լ է այն գործը, որ պիտի աներ, իսկ նոր թեկնածուները իրենց հստակ ծրագիրը ներկայացնեն: Ժամանակն է հուզականից անցնել սթափ իրատեսական քայլերի: Եթե քաղաքականության մեջ են, ապա իրենց քաղաքականությունը ո՞ւր է բերել-հասցրել մեզ, չէ՞ որ գրողը չի բերել, մտավորականը չի հանգեցրել այս վիճակին: Սրան հանգեցրել են քաղաքականության այն դեմքերն ու հոսանքները, որոնք դեկավարել են ժամանակին և կառավարում են այսօր, ովքեր քաղաքականություն, դիվանագիտություն են մշակել ու մշակում, ովքեր հանրության մեջ գաղափարներ են տարածում: Իսկ գրողները մեր հոգևոր, մշակութային, մեր ազգային մտածողության պահապաններն են և մշտապես սուր ելույթներ են ունենում, հրապարակում «Գրական թերթում», ինչպես, օրինակ, կրթության,

2021-ը ամենքիս կամքով լինի ապրեցնող

Սկիզբը՝ էջ 2
Բնապահպանական, մշակութային թեմաները: Մեր գրողները մշտապես խոսում են այն մասին, ինչը առնչվում է մեր ինքնությանը:

Ինչ վերաբերում է Պաշտպանության նախարարությանը, կարծում եմ՝ ամեն գեներալ իր խոսքը նախ պետք է մի անգամ չափ ու ձևի ենթարկի, հետո որոշի՝ հայտնել հանրությանը, թե՞ ոչ: Հարցեր կան, որոնք պետք է իրենց ներսում քննարկեն կամ անվտանգության խորհրդում, ոչ այդպես բացահայտ, մանավանդ երբ թշնամին ամեն տառից մեր ամբողջ հասարակության տարբեր շերտերի, հատկապես պաշտպանության, անվտանգության և այլ բնագավառների մասին կարծիքներ է հավաքում: Այս պատերազմը սկսվելուն նաև որոշները նպաստեցին այն ելույթներով, որոնցում ասում էին, թե ինչու չի հարձակվում թշնամին, երբ մենք այսպիսի վիճակում ենք, մեր սահմանները, մեր հոգեբանությունը, մեր գեները այսպիսին է և այլն: Մի՞թե գրողը պիտի գա, փրկի: Գրող եմ, ասում եմ՝ ինչո՞ւ ժամանակին, գեներալներ, ճշմարտությունը չեք ասել, հրաժարական չեք տվել, շարունակել եք պաշտոնավարել բարձր դիրքերում և հիմա միմյանց եք մեղադրում: Հասարակությունը չգիտի՝ այդ ուղիով ինչ է, որ գնել են, ճի՞շտ է, թե՞ սխալ, չի էլ կարող իմանալ, պատկան մարմինները պիտի դրանք քննարկեն: Թույլ տեղը միշտ գտնում են մտավորականությանը և պահանջներ են ներկայացնում, այնինչ մտավորականությունը հիմա պահանջ ունի նրանցից՝ և՛ կառավարողներից՝ Վարչապետի, Նախագահի գլխավորությամբ, և՛ խորհրդարանական ու արտախորհրդարանային այն կուսակցություններից, որոնք ազգային ծրագրեր են առաջարկում՝ ծայրահեղ, ոչ իրական, որոնք ընտրվելուց հետո չեն կարողանում իրագործել և տապալում են ամբողջ գործը: Հայրենիքը հասցրեցիք այս վիճակին, հիմա ումի՞ց եք պահանջում: Ձեր ծրագրերը, ձեր գործունեությունը վերլուծեք, ձեր քաղաքական միտքը վերլուծեք, ձեր մեղքը, սխալը խոստովանեք: Գրողն այս պահանջներն ունի: Քաղաքական, կուսակցական գործիչները պետք է իմանան, որ գրողը գրելու է այդ մասին: Ժամանակը մնալու է գրականության մեջ իր որոշակի կերպարներով՝ երգիծական, դրամատիկ կամ ողբերգական, մնալու են պատմության մեջ: Ե՛վ փանջունիականություն կա, և՛ Պարոնյանի Ազգային ջոջերը կան, և՛ Դեմիրճյանի Հայր, և՛ Քաջ Նազարը և այլն: Այդ ամենը մնալու է պատմության և առաջին հերթին գրականության մեջ: Այնպես որ, ես քաղաքական գործիչներին՝ և՛ կառավարող, և՛ չկառավարող, ու բոլորին հորդորում եմ՝ իրենց ծրագրերը շատ իրատեսական կազմեն, որովհետև մենք պարտվեցինք տեսիլային մտածողության և իրատեսական մտածողության բախումից: Ճանաչենք մեզ և թշնամուն, կտեսնենք, որ նրանք շատ ռացիոնալ քննող մարդիկ են, մենք՝ երազային, սրանրա հոյսին մնացող, հավատացող, որ աշխարհի հզորները պիտի լինեն արդարության, քրիստոնյայի կողմը, այնինչ, դրանք բոլորը հուզական, պարզունակ ենթադրություններ են: Բարեկամին թշնամի, թշնամուն բարեկամ համարողները մշտապես ծավում են մեր քաղաքական հեղինակությունը: Լավ կլինե՞ր, որ մտավորականության մասին խոսողները նախ և առաջ գրականություն կարդային: Շատերի խոսքից պարզորոշ է, որ ժամանակակից գրականությանը ծանոթ չեն, մի քանի դասական անուն են շրջանառում:

Միամիտ առաջարկ անեմ մեր քաղաքական գործիչներին՝ և՛ իշխանավոր, և՛ ընդդիմադիր, իրար հանդիպելու, զրուցելու, վիճելու: Ինչ-որ չափով ճգնաժամից դուրս գալու միասնական ուղի գտնելու համար առաջարկում եմ հանդիպման վայր ՀԳՄ Կլոր սրահը: Մեր մեծերի լուսանկարների ու նրանց հոգիների հովանու ներքո: Հիշե՛ք՝ Թումանյանը ինչ դառը խոսքեր է գրել 20-ական թվականների մեր քաղաքական կյանքի մասին, մեր ներսից մեզ ավերելու վիճակի վերաբերյալ: Կլոր սրահում՝ Նա կհետևի ձեզ, սիրելի՛ գործիչներ:

Ցավալի է, որ դեկտեմբերի 19-ի Ազգ օրը եռաբլուրում ցուցանեց մեր այսօրվա դաժան ճշմարտությունը: Բոլորս սթափվելու կարիք ունենք:

ԳԹ - Ի՞նչ կնաղթեք ՀԳՄ անդամներին և մեր ընթերցողներին գալիք 2021 թվականին:

Է. Մ. - Մեր ժողովրդի պատմությունը դարերով ապրելու կերպ է թելադրել մեզ իր փորձությամբ, իր հուսավառությամբ, հուսահատությամբ, բայց միշտ կամային ջիղը գործել է, ապրելու, ստեղծագործելու ջիղը: Կցանկանայի, որ բոլորս հավատայինք, ու 2021 թիվը ամենքիս կամքով, ջանքով լինի ապրեցնող, արարող, նոր, հետաքրքիր գաղափարների ժամանակ լինի, ուժ ունենանք վերջապես դուրս գալու կաղապարային մտածողությունից, նոր աշխարհաքաղաքական իրողությունները ընկալենք և մեր դերը, մեր ապրելու կերպը մեր հանրապետության, Արցախի, Սփյուռքի համատեղ միակամությամբ, ուժով, հոգևոր խտացումով դարձնենք մեր գալիքի արևոտ տարիներից մեկը՝ 2021 թվականը: Բոլորին ցանկանում եմ հավատ, հոյս, սեր:

Շաքե ԵՐԻՑՅԱՆ



Արմենուհի ՄԻՍՅԱՆ

Տարին ափսոսեց եմ առել, փորձում եմ չափակշռել այն. լեցուն է, խառն է, բազմերանգ, ու քանի որ վերջում շատ է ծանրանում, ցած եմ դնում ձեռքիցս. փխրուն կառույցս չի կարող այդչափ ծանրություն կրել: Կզննեմ նրան կողքից: Գրողի համար ապրելը հաճախ հենց զննումն է, հայեցումն է: Ապերախտ լինելը իմ գունդանգի մեջ չի մտնում, հետևաբար, աչքերս չեն կարող չտեսնել կառուցիկ գույների թրթռոցը. արժանացել եմ Naji Naaman 2020 ամենամյա միջազգային գրական մրցանակի՝ ստեղծագործական մրցանակ անվանակարգում (creative prize): Մրցանակաբաշխությանը մասնակցել էին 3034 գրողներ 48 երկրներից, որոնցից մրցանակների են ար-

տալվորություն թողնելու չնահանջող մոլուցքն էր, ինչը պիտի հանգեցներ կեղծիքի իրականության, մինչդեռ երկիրը ավազե ժամացույցի պես ցած էր հոսում այդ ընթացքում... Բոլոր կոչերն ու խոստումներն այդպես էլ մնացին փողոցի մակարդակում՝ չվերաճելով պետականաշինության, հստակ գաղափարախոսության, համակարգված կառավարման: Չորանամ կատարյալ, մինչև վերջ արվածը. հետևողական աշխատանքի շնորհիվ հասարակությունը պառակտվեց, բաժանվեց նախկինների ու նորերի, սևուսպիտակի բաժանարար գծի, ու գեներացվեց չլաված-չտեսնված ստեղծություն:

Մենք սխալվել ենք՝ թերագնահատելով թշնամուն: Թշնամին ուշադիր է հետևել մեր երկրում ընթացող գործընթացներին և ճշգրիտ հաշվարկել պատերազմ սկսելու ժամանակը: Հազար, հազար ողորմի մեր լույս դարձած հերոս երիտասարդներին: Առաջին օրերից իսկ նրանցից շատերը կամավորագրվեցին հայրենիք փրկելու սրբազան գործին: Նրանք ուժեղ էին, ոգեղեն, կյանքով լի... Բայց նրանք անպաշտպան էին, կարելի է ասել՝ մերկ ու բառիս բուն իմաստով՝ բաց, չպաշտպանված երկնքի տակ նետվեցին մինչև ատամները զինված թշնամու երախը: Մեր անվերջ օրհնությունը, աղոթքներն ու Աստծո ողորմությունը նրանց... Դուք՝ պայծա՛ռ, ընտրյա՛լ տղաներ, ազգիս երակն էիք, դուք իսկապես լույս էիք ու լույս դարձաք, և ձեր տեղը, հավանաբար, հենց երկնքում էր...

Պիտի՛ ապրել...

Ժամացել 75-ը՝ 4 տարբեր անվանակարգերում: Մրցանակը ինձ հնարավորություն տվեց դառնալ Naaman մշակույթի միջազգային տան անդամ, իսկ մրցանակակիր գործերը երեք լեզուներով՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, տպագրվեցին մրցանակաբաշխության տարեգրքում: Պատիվ ունեցա նաև դառնալու Կոլումբիայի Արվեստների միացյալ ազգությունների կազմակերպության անդամ, ինչպես նաև արժանացա Uniletras կազմակերպության բարի կամքի դեսպանի կոչման՝ «Ambassador of good will of Naciones Unidas de las Letras» (Կոլումբիա): Պատմվածքներս և բանաստեղծություններս թարգմանվեցին և տպագրվեցին իսպաներեն՝ Մադրիդում և Կոլումբիայում, արաբերեն՝ Սաուդյան Արաբիայում, մակեդոներեն՝ «Современи Диалози» մակեդոնական գրական ամսագրում: Վերանշանակվեցի Չանգուայի համալսարանի (Թայվան) «Կրթություն, գրականություն» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

Տարեվերջին տպագրվեց նաև պիեսների գիրքը՝ «Ազա՛վն ասաց», որտեղ ընդգրկված էր 2019 թ. երևանյան Բուքֆեսթիվում Դրամատուրգիա անվանակարգում մրցանակ շահած համանուն պիեսս: Այս ամենը գրողի համար կենսագրություն է ու ճանապարհ, բայց դառնում է կատարելապես **ՈՉԻՆՉ, ՓՈՉԻ**, երբ հայրենիքն է վտանգվում, երբ երկիրը պատերազմի մեջ է ներառվում: Իմ սերունդը հասցրեց շատ բան տեսնել՝ Արցախյան ազատամարտ, մութ ու ցուրտ տարիներ, երկրաշարժ, պետականաշինության ընթացք, բայց երբեք, երբեք արժանապատվության նեմացում ու հոգևոր նման անկում մենք, համենայնդեպս ես, չեմ ունեցել: Սոցիալական անարդարություններ, կոռուպցիայի դրսևորումներ եղել են նախկինում, հասարակությունն էլ երբևէ աչք չի փակել դրանց վրա՝ ազատորեն բարձրաձայնելով այդ արատները, բայց մեր ողնաշարը եղել է ամուր, արտաքին թշնամու մարտահրավերներն ընդունել ենք արժանապատվորեն և եղել ենք անսասան: Պատերազմում մեր պարտությունը առաջին հերթին մեր անկազմակերպ, փնթի գործունեության, առաջնայինը հազարերորդականից չտարբերելու արդյունքն էր, ղեկավարելու անկարողության և ամենուր քառստեղծելու մեծ ձիրքն էր, մասնագետներին իսպառ չլսելու և բոլոր ոլորտներում նրանց ետին պլան մղելու հետևանքն էր, պոպուլիզմով առաջնորդվելու և հասարակության վրա ազդեցիկ

Հազարավորների կորստյան անդառնալի ցավը տապալում է ինձ ու մշուշում աչքերս՝ ամեն ինչ դարձնելով անիմաստ ու սին... Մենք պարտվող չէինք, մենք մեծամիտ էինք ու պոռոտախոս, թշնամուն ոչխար էինք համարում, ինքներս առյուծ լինելուց լիովին հեռացած: Այդ ոչխարը պետական մակարդակով հայերեն էր սովորում՝ թշնամու ուղնուծուծը ճանաչելու և մեզ հետևելու համար, իսկ մենք հպարտ-հպարտ «դուխով» էինք պարապում... Նրանք, մանկապարտեզից սկսած, ազգային, թեկուզ և սուտ գաղափարներով էին դաստիարակվում, հայատյացությամբ սնվում, իսկ մենք՝ տիրաժավորում թշնամու հետ հաշտեցման բազում ծրագրեր արվեստի, լրագրության, գիտության, այլազան ոլորտներում: Մենք աշխարհաքաղաքացի էինք դաստիարակում՝ ծաղրելով «հայու գենը», ամոթ ու հետամնացություն համարելով ազգայինը առաջնահերթելը, այնինչ, արտասահմանյան այդ վեհ, հումանիտական կարգախոսներով ծրագրերը ֆինանսավորվում էին հենց թուրքի կողմից՝ պատերազմը սկսելով շատ ավելի վաղ՝ հայ երիտասարդների ու պատանիների ուղեղներում... Մենք միայն պատերազմում չենք պարտվել, մենք պարտվել ենք գաղափարական, կառավարման, անվտանգության, ռազմավարական, դիվանագիտական, վերահսկողության, կրթության և շատ այլ ուղղություններով: Ավելի հուսալքված, խաբված, ստորացված և ջղայնացած երբևէ իմ երկրում չեմ զգացել և... դժվար է դառնում ապրել... Ամեն օր բացել աչքերը և կրկին ցանկանալ փակել՝ չառնչվելու համար այս ծանր իրականության հետ... Սակայն սարսափեցնում է այն միտքը, որ ապրելը դժվար կարող է դառնալ շատերի համար: Ո՛չ, չի կարելի թույլ տալ, «թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի»... Տառապանքը հաղթահարելու համար հարկ է մինչև վերջ խմել այն և սկսել նոր, մաքուր էջից: Ինչպես սիրելի Կարինե Խոզիկյանն է ասում՝ «թողթ ու գիր» պիտի անել: Գրողի գործը գիր անելն է: Շարունակենք գիր անել՝ հանուն կյանքի և նոր, արժանապատիվ օրեր բացվելու: Հայաստանը դեռ պիտի՛ դառնա այն երկիրը, որտեղ ապրելը պատիվ է, և որտեղ կրկին կուզեն գալ օտարերկրացիներ՝ ճանաչելու և ըմբռնելու հայկական գանձերը՝ որպես յուրահատուկ և տարբերվող գույն՝ աշխարհի բազմազան ներկայանակից: Պիտի՛ ապրել...



Լևոն ՇԱՀՆՈՒՐ

Այսքանով հանդերձ, մի արտահայտիչ զգացում է իրենից բխում. առաջին ու միակ սիրուց ինչ-որ ակնթարթ է նրանում փրկվել...

Անծանոթ մեկը, որ մթնշաղում կարող է հայր թվալ:

Տարիներով ներան չէի հիշել, մտաբերումը անակնկալ

Տիւ ու գիշեր

ստացվեց. ներա հուշը բուռն թափով հեղեղի պես գալիս ոտատակ է անում հենց այն պահին, երբ նե այլևս իմը չէ, անգամ չգիտեմ, թե ուր է, անիմաստ է փնտրելը. անմտություն: Մի պարզ, բայց դաժան ճշմարտություն փռվեց իմ սրտում. սիրելու համար ներանից հեռանալ ու սրտանակ էր հարկավոր եղել...

Ճերմակ էջի առջև գրեթե բոլորը խեղճացել են, բացի հրաման գրողներից և մահապատժի իրավական կողմը լրացնողներից: Ես նույնպես անզորանում եմ. նույնությամբ, երբ թիկունքիդ անհնչյուն մշուշ է գոյանում ու շրջվելիս քեզ կտրում անցածդ լեռնակածանով հրճվելու հնարավորությունից:

Դատարկ ու անարձագանք սպիտակ թղթի վրա փորձում եմ գտնել քեզ. աչք ցավեցնող ճերմակն այնքան սաղր է, որ ինձ դրսում է թողնում, անգամ միլիմետրանոց խորք չունի: Ես հուսահատվում եմ. ընդամենը ցանկանում եմ քեզ գտնել-բերել բառերով, ինչպես հոգեհման, հոգեհարցունքները. քեզ կառուցել, իմանալ, պատկերել որտեղ լինելը, վերջապես քո միտքը գուշակել...

Մինչդեռ ճերմակությունը չի ընդունում քեզ, որովհետև իմ հուշերում դեղին շրջագգեստ ես հագել, կապույտ աչքեր ու ծիրանագույն մազեր են թափվում ուսերիդ. սրանք ճերմակ թղթի համար անընդունելի գույն-բառեր են:

Օր 1. Ես որոնում եմ բառը, որի մասին, այսինքն՝ որի միջոցով հարկավոր է գրել. բազմաթիվ ուղղություններով փնտրում եմ բառին մերձենալու եզրերը, մոտեցումները, ոճը: Չորս կողմից շրջապատել այդ մի բառն ու մյուս բառերով կապակցելով հասնել նետվել դրա վրա և պինդ պահել, մինչ իմ միտքը կուսումնասիրի, կկշռի քաջը, այնուհետև մեկ այլ բառախմբի միջոցով թմբկեցնում ու պառկեցնում եմ վիրահատական սեղանին, մեկ ուրիշ բժշկաբառերի օգնությամբ հերձելու միտումով՝ բացում եմ ներա կուրծքը...

Նախ, այդ բառի ծագումը, որևէ պահին առաջանալը, նշել առկայծման մասին:

Բառի տրոհվելը. ինչի միջոցով փորձում է խոյս տալ իմ ուշադրությունից:

Օր 2: Հուշը չի բացվում իմ առջև, ու ես չեմ կարողանում գտնել այն բառը, որով հնարավոր կլինի նկարագրել ներա գեղեցկությունը: Ինձ կին է հարկավոր, ով կկանգնի կոմոդի դիմացը՝ հայելու առջև, միգուցե քունքի մազափունջը կթեքի ականջի հետևը, և Բառը կենդանության նշաններ կտա:

Ներան հասնել, վիրահատված, գուցե արդեն հաշմված բառի միջոցով, որպեսզի սա ենթարկվի ինձ, քանի որ ես գիտեմ իր բովանդակությունը, ճեղքել եմ դրա մարմինն ու մանրամասնորեն շոշափել ներքին օրգանները:

3-րդ օր: Փորձում եմ վերհիշել կարդացածս գրքերը, գուցե էջերից մեկի անկյունում, որտեղ. հայելու առջև ներա հարդարվելն է նկարագրվում, ծվարել է այդ բառն ու իրեն շրջապատել անձրևային եղանակով, սենյակային լռությամբ, նաև կնոջ մարմնամասերի թվարկմամբ: Որպեսզի նմանօրինակ բա-

ռախմբերով անտես մնա ինձից՝ Բառն իր ու իմ միջև հազարավոր խոսքեր է լցնում, ինքն իրենից ծնում է՝ լեռներին կոտորված ձվի մայրամուտն, ու նման խոսքերին թողնում սաղր տեղերն՝ իմ աչքի առջև, իսկ ինքը սուզվում է խորքն ու անդադար հետևից շեղող մանրաբառեր ծննդաբերում. նա ճերմակաթույր հովափակին հեծնած լեռան սրորորին սլանում է, այսպիսի ընթացքային մեջբերումներով, նախադասություններ հյուրասիրելով՝ պատկերի շարունակություն է առաջացնում, մինչդեռ ինքը շտապում է ինձից փախչել...

Թղթերին գրում եմ այս ամենը, մտքիս եկած յուրաքանչյուր բառ նշում և փակցնում եմ սենյակիս պատերին: Բառերն իրար կողքի շարելով արդեն հինգերորդ հաստափոր օրագիրն եմ լրացնում: Նպատակով, որպեսզի սրանց հսկեմ ամեն օր թերթեմ էջերն ու նայեմ, տնօրինեմ, ու մի օր սրանցից դավաճաններ կգտնվեն, որոնք կենթարկվեն իմ պահանջին և ճանապարհ կընկնեն դեպի որոնաձու Բառը: Այդպես էլ եղավ. անանուն բառերից մի քանիսը համաձայնվեցին:

Միևնույն բառը շարունակաբար գրելով, ամեն մեկն ուրիշ, փարթեր է հնչում և իրենում մեկ այլ հուշ է կրում:

Երկու ամիս տևեց մինչ դավաճան բառերը գտել, վստահություն էին ներշնչել Բառին ու օր օրի բերում էին դեպի միտք: Ես վայելում էի հաղթական պահի մոտենալը, առանց շտապելու հետևում էի Բառի ուրվագիծը, որն արդեն հասկանալով դավադրությունը փորձում էր վերադառնալ, սակայն «ուշ է» մտքի սահմանները կտրել էր: Նույնիսկ խնջույք կազմակերպեցի, գինին ջերմացնում էր ներսս, ես հրճվանքից վայրենուն հատուկ (վարա-

զին որսալու կամ երևակայական թշնամուն սրտից խոցելու) կռվարար հարվածներ էի տեղում. պարում էի, քանզի, ուր որ է Բառը միտք էր հասնելու, այնուհետև նվաստանալով գիր դառնար...

Վերջապես հայտնվեց. արդեն արնաշաղախ, ուժասպառ, դավաճան բառերը գրեթե քարշ տալով շարունակին միտքս: Բառը Նե-ն էր, և ինքն էլ ինձ համար էր անակնկալ պատրաստել, մտադաշտում հայտնվելուն պես՝ պայթեց և ներանից, ներանով, ներանեն, ներանում, ներան հիշեցնող ձայնանիշով* վերջին տեսարանը ամենայն մանրամասնությամբ մտքումս ցրիվ եկավ. ծառ, որը հիշեցնում է ներան, բոլոր անկողինները, պատերը, որոնց վրա անծանոթի շողք է տարածվում և ելուստներից մեկի ստվերը երկարում ու ներա մազերն է նկարում: Այն ամենն, ինչ արարված է երկրի վրա՝ ներանով հրաժեշտի տեսարանը վերարտադրելու հաջողված փորձեր են:

Բառ-հուշ-սրտարան

Ուշ գիշեր. քո բաժակի տակը գինու լճակ է գոյացել, որը ձգվում է քիչ այն կողմ նետված անձեռոցիկն ու արշավող գորքի նման՝ երակ ու պարանոց կտրելով գրավում է ճերմակությունը: Մեր բառերի կեսն արդեն քնել են, իսկ թմրածները կիսատ են դուրս գալիս: Քչերն են մնացել, հատուկենտ, բայց ընտրյալները, որոնք աներեր լրաբերների պես ընդարմացող մտքից պլստում հասնում են մեզ. ինձ ու քեզ հավատարիմները, ու դրանցով իրար սիրում ենք: Երբեմն աչքի տակով նայում ես կոմոդիդ հայելուն ու քթիդ տակ ժպտում ես: Ինձ թվում է, հայելիում ռեժիսորական անձնակազմ է նստել՝ տեսախցիկն ուղղել է մեր կողմն ու ցանկանում է մեզնից համր ֆիլմ ստանալ. հրաժեշտի պատկերը պատճենվում և հազարավոր Բառ-բանալիներով կողպվում է հուշերի խորքում:

Խավարում յուրաքանչյուր հնչյուն ավելի երկար է ճամփորդում՝ ինքն իր ձայնով երկարացնելով ընթացքը, իսկ ցերեկով դուրս գալուն պես թակարդվում է առաջին իսկ հանդիպած արհեստածին ձայնում:

Կարոտվածի անունը բացականչելու կատարյալ պահը Գիզակն է. գիշերվա ութերորդ հատվածը, երբ ամենաթույլ ցնցումներն ու դողերը լռում են, որ լուսաբացը կարողանա իր նուրբ շաղով թաղանթել երկիրը. պատկերը ջրատեսք:

Լուսաճեմ. մեռյալները քաշվում են թմբերի տակ, իսկ ողջերի կուրծքն են վերադառնում թափառող հոգիները. սրանցից ոմանք մոլորվում ու այդպես էլ հետդարձը չեն գտնում. մոլոր քաշվում ու իր հետ տանում է նրանց, իսկ անհոգի մարմինն այլևս չի արթնանում:

Այգ. լսվում է մեռյալին հայտնաբերածի կենտ ճիչը...

*Նե-ն հայկական երաժշտության մեջ ութնյակի 6-րդ ձայնանիշն է:



Միխայլո ՍԻԴՈՐԺԵՎՍԿԻ (Ուկրաինա)

Միխայլո Սիդորժևսկին «Ուկրաինական Գրական թերթի» գլխավոր խմբագիրն է: Ուկրաինայի գրողների ազգային միության նախագահն է: Բանաստեղծությունների «Երկու աշխարհների միջև կես-կես» ժողովածուի և հրապարակախոսական գրքերի հեղինակ է:

«ԿՀԱՆԴԻՊԵՆ-Ք ՄՅՈՒՍ ԿՅԱՆ-ՔՈՒՄ» շարքից

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼՈՒ ՀՐԱՎԵՐՔ Փոքրիկս իմ, քոյր իմ, Արի գնանք մի այնպիսի տեղ, Որտեղ քեզ հեղ պլինենք անբաժան: Շառլ Բոդլեր

...արի, փոքրիկս, քոյր իմ, այս թաց ու շաղ օրվա միջին ճամփա ընկնենք մենք երկուսով, գնանք դու և ես ձեռք ձեռքի տված, մինչև ծերն այս աշխարհի, ուր ծաղկազարդ գորգ է փռված ճանապարհի կողմերում, որտեղ մի այրված կամուրջ կա գետի վրա ափեափ, կա երկնի բույր, փայլվիլուն ճաճանչ, այն, ինչ հմայում, տանում է մեզ... տե՛ս, իմ սիրած. գիշերվա ճերմակ սավանը դեղին արևն է պատռտում, և քո ձեռքը իմ ձեռքի մեջ, իսկ քողարձակ երկնքի մեջ մենավոր թռչուն է ճախրում... Ես էլ այնպես ասում եմ քեզ. այս գունեղագեղ աշխարհն, իմացիր, ուր փախչում ենք, պատկանում է մեն-միայն մեզ, արի գնանք հեռո՛ւ-հեռու, որ ի վերջո լինենք միասին... հետներս կառնենք խնձորենու ծաղկաթերթեր, սորիպոյան մի շղարթ արև,

աշնան օշինդրի մի խրճիկ,
 ա՛յ, անձրևի արցունքն այս աղի՝
 լույս աշխարհի վրա թափված,
 նաև արյունի մարմրումը
 ճակատագրի անիվի վրա...
 ...մենք կծկենք, երբ գարուն գա,
 երբ որ անձրևը կթափվի, չէ՛...

 ... թող դա լինի աշնան մի օր,
 խենթ փոթորկի պաղ մոխրի մեջ.
 այնժամ վհատված աշխարհը
 սրբազան և մի քիչ ճանձիր
 թաց ապակուց կնշմարվի,
 իսկ անձրևի պաղ շիթերը
 թող մեղադրեն թռչած ամռան
 դեղնած արևի շողերին.
 ...և որբացած առավուտի
 լույսը կբացվի առանց քեզ
 թռչած ծաղկանց
 լքված այգում,
 և մեր անհագ ըղձանքների
 ունայնությունը կլինի...
 դու ասացիր՝ ամեն բան կանցնի,
 թե ամեն ինչ կանցնի-կգնա,
 ու լոկ սպիներ կմնան,
 մեկ էլ օշինդրի դառը հոտ
 և տխրության համն աղի,
 ինչպես ոստայնը սարդի հյուսած
 խորթ աշխարհի վիհի վրա...
 այո՛, թող լինի դա աշնան մի օր,
 երբ թուխսն է ծածկում գետինը գու,
 երկարում են սովերները
 և քանի դեռ-
 հիշում ես-
 հրես մի քնքուշ ծաղիկ...
 և Մեծ Արջի միայնակ աստղերը
 երկնքի մագաղաթի վրա...
 և անտեսանելի ձրորդները
 խոտերի մեջ,
 որ հատում են ժամանակը
 գլխիվայր
 պերճ օգոստոսին...
 և մեր Կաստանեղան...
 նաև մեր քնկոտ գետը
 ափերի մեջ գերեզմար...
 և բախտագուշակ լուսնյակը,-
 այնտեղ, ուր անսահման է
 գիշերը դրախտային,
 սոճու ճյուղերով պսակված...
 իսկ հիշո՞ւմ ես դու,
 ինչպես առավուտ ծեփին
 խենթորեն ու մեղկ
 բացվել էին վարդերը թաց,
 գույները մուգ կարմիր...

Արևի դեղին հյուսիս ծորացել, լցվել էր հատակին ու կեսօր-
 վա մեջ կեցել: Սպասում էր՝ չի՞ լինելու մի ճանձ, մեղու կամ
 խատուտիկ թևերով թիթեռ, որ գա, կնճիթը թաղի մեջն ու ըմ-
 բոշխնի: Բայց հալած արևն այնքան ջերմ ու այնքան հուրհրան
 էր բետոնե հատակի վրա, որ ոչ մի շնչավոր էակ դրան մոտ
 գնալ չէր համարձակվում:

Մկոն պառկել էր թախտին, խմած արաղից ու անխիղճ
 արևի տապից շշմած՝ նայել-նայել էր Մասիսի գագաթին, սիր-
 տը սարի սրտուռ ձյուն էր երազել ու հառաչել էր՝ արաղի գո-
 լորշիները խառնելով օրվա թախիծին: Առավոտնից
 տանեցիների հետ կռվել էր. կինը գարնան ուռենու ճյուղի
 նման հազար տակ ծալծվող բնավորություն ուներ. այս պա-
 հին մի բան կասեր, քիչ հետո՝ այլ... Իսկ ինքը դրանից գա-
 րանում էր:

Երեկ խոսել, պայմանավորվել էր, որ գային, կանաչին քա-
 ղեհին, իրենց ձեռքով կապեին ու միանգամից տանեին: Հաշվել
 էր, որ այդպես իր համար ավելի օգուտ կլիներ, իսկ կինը...
 Չէ՛, դու չես աշխատում, դու բերքի վրա «ամագ» չունես, ու
 սիրտդ չի ցավում եղածին:

- Հա՛, - հարցրել էր Մկոն սպառնալից:
 - Բա՛, - նույն տոնով պատասխանել էր կինը, և Մկոն
 առնվել էր:

Այդ պահին վերջապես հասկացել էր, որ կյանքի կշեռքի
 ծանր նժարը թեքվել է կնոջ կողմը: Ամուսնության առաջին
 իսկ օրերից Մկոն ցույց էր տվել իր բնավորության փուշը, և
 կինը լավ հասկացել էր, որ եթե նրա խոսքը չէղավ, արունք
 կանի: Բայց հետո կինը ծալ-ծալ, ոլոր-մոլոր, խորամանկ ու
 խաբուսիկ՝ քանդել-թուլացրել էր մարդու հեղինակության հիմ-
 քը ու հիմա վճռական հարձակման էր անցել: Երեխեքն արդեն

բռնված ճնճողի պես սիրուն
 սկսում է թաքրտալ: Հիմա գա-
 րանում է նաև շուկայում
 կանգնելիս: Կանգնում ես սե-
 ղանի ետևում, հատ-հատ
 մաքրում, փայլեցնում ես պո-
 միդորը, վարունգի վրա կես
 ժամը մեկ ջուր ես ցողում,
 սարսափով նայում ես, թե
 կանաչու կապերն ինչպես են
 շոգից ժամ առ ժամ սմբում
 ու փոքրանում: Ախր դրան-
 ցից ամեն մեկին, սկսած ցա-
 նելուց ու տնկելուց, այնքան
 ես գուրգուրել, որ հիմա քեզ
 համար հարազատ են դար-
 ձել ու բոլորին մեկ առ մեկ
 ճանաչում ես... Պիտի վաճա-
 ռես, հաշվի չառնես փչացածը,
 սմբածը, կորածը, գումար հա-
 նես: Եր գումարի միջից ծախսերդ
 դուրս պիտի գաս ու հետո
 հազար դոլար հավաքես, որ Արամի
 համար էլեկտրական սին-
 թեզատոր առնես: Եղբանը ո՞նց
 բացատրես մի կիլոգրամ պո-
 միդոր առնող քաղաքացի տիկնոջը,
 որը մեկ-մեկ ընտրում է
 ապրանքը, վերցնում-դնում է,
 գինն է իջեցնում: Քիչ է մնում
 ասես. «Քո՛ւր ջան, ձրի տամ տար»:
 Գալիս, կանգնում, 10 րո-
 պե խոսում է, ինչ է թե գինը 10
 դրամ իջեցնի, հետո էլ անուն
 է դնում.



Հրաչ ԲԵԳԼԱՐՅԱՆ

- Պոմիդորը խալոտ է:
 Մի անգամ կովի մեջ չընկա՞վ: Եկավ մարդաչնման մեկը:

ԿԻՎԿԻՎԻ ԻՆՉՆ Է ԵՐԿԱՐ

հասունացած են, Մկոյի մեջքը ցավում է ու չի կարողանում
 նախկինի պես աշխատել: Հիմի տան տեր ու տան գլուխ ինքը
 կարող է լինել: Մկոն էսօր հասկացել էր, այդ մի պահի մեջ է
 կենտրոնացրել իր ամուսնական ողջ կյանքն, ու երկինք-գետին
 խառնել էր իրար, հայտնաբերել թելին էր շարել կնոջ յոթ պորտն
 ու նստել էր մեքենան: Շրխկոցով փակել էր հին դուռը, գազ
 տվել ու հետևից փոշի հանելով՝ պոկվել դեպի Արմոյի «օբյեկ-
 տը»: Իսկ էր քեֆն ուզածի չափ, հետո մեքենան մի կերպ բե-
 ռել, կանգնեցրել էր դռան առաջ և առանց հողամասի ու
 ջերմոցի կողմը նայելու՝ մտել էր տուն:

Բարձրացել էր երրորդ հարկի պատշգամբն ու պառկել էր
 թախտին: Բայց արևը հալվել, լցվել էր բաց պատուհանից
 ներս, ու հիմա շունչը կտրվում էր: Ժամանակին ինքը հատուկ
 սարքեց այս պատշգամբը, թող մնացած տասնհինգ սենյակ-
 ների լուսամուտները փակ լինեն, այս պատշգամբը բաց ու զով
 լինի: Թե ամռան տապին սիրտդ ուզի՞ պառկես թախտին,
 աչքը Մասիսի գագաթին գցես, ու քամին՝ Մասիսի փչած քա-
 մին գա, հոգնած, շոգած մարմինդ զովացնի: Բայց այսօր,
 հակառակի պես, նույնիսկ էր մի պուտ զեփյուռը չկա:

Նա պառկել էր աչքի մեկը կիսաբաց ու մտածում էր
 Մասիսի մասին, կյանքի մասին, իր արած-դրածի մասին ու
 բան չէր հասկանում: Ամբողջ մի կյանք՝ քառասուններկու տա-
 րիներից երեսունը, աշխատել էր: Աշխատել էր ստրուկի նման,
 աշխատել էր առանց իրեն խնայելու: Տուն էր կառուցել, ջեր-
 մոց, մեքենա էր առել... Ու հիմա, երբ մեջքը տեղի-անտե-
 ղի ցավում է, ու այլևս չի կարողանում հողի վրա բանել, կինը
 լեզու է առել:

Ամագ չունե՛ս, - մրթմրթաց ինքն իրեն, հայտնաբերել կծիկը
 բացեց մտքում ու ձեռքը ծխախոտի տուփին մեկնեց: Մի ումպ
 ծուխ առավ, բայց, չգիտես ինչու, ծուխն ամեն անգամվա հա-
 ճույքը չպատճառեց: Ծխի միջից նայեց կեծ-արևին ու թեց,
 ծխախոտը մոխրամանի մեջ հազար տակ գարշանքով
 ծալծեց:

«Տեսնես Արամը ծխո՞ւմ է», - իրենից անկախ մտածեց տղա-
 յի մասին: Վերջին շրջանում նրա մտքերն անընդհատ դառնում
 էին տղայի շուրջը: Առաջ էլ էր նրան շատ սիրում, բայց քանի
 Արամը հասակ էր առնում, սիրտն այնքան ավելի գորովանքով
 էր գարկում տղայի մասին մտածելիս: Ո՞վ իմանա, գուցե իր
 անհայր մանկությունն էր պատճառը: Ճիշտ է, Արամը շքեղ
 մանկություն չի տեսել, բայց իր նման հայր է ունեցել, ձեռքից
 բռնող, խանութ տանող, պաղպաղակ ու կրնֆետ առնող է ու-
 նեցել: Վերջերս էլ հազար դոլար տվեց, էլեկտրական սինթե-
 զատոր առավ, ինչ է թե տղան երգի ու նվագի հետ սեր ունի:
 «Թող սովորի, թող նվագի, գուցե նրա հացն էլ դրա մե՞ջ է», -
 մտածեց ու կնոջ ժլատ ճնգնաբեկ ընկալումը կնոջ չհանձնելով՝ առավ:
 Չէ՛, Արամն իր նման անչափահաս ու մի մատ՝ վարունգի ութ-
 սուն կիլոգրամանոց պարկը չի շալակել, իր նման Լեննազան
 քաղաքի շուկայում գիշերը վարունգի պարկերի վրա չի լուսաց-
 րել, իր նման ամեն լուրիկի համար հոգի չի տվել, իր նման կշեռ-
 քի ամեն վարունգի համար հոգին չի վառել, որ էսօր էրեսին
 շրխկացնեն, թե.

Ամագ չունե՛ս...
 Հետո ի՞նչ, որ էս ցավը վաստակելուց հետո աշխատողներ
 է վարձում: Ի՞նչ կլինի, եթե մի քանի դրամ պակաս ունենա,
 բայց հոգին հանգիստ լինի: Առաջ անում էր, հիմա չի կարող-
 անում ջերմոց մտնել: Ամռան այս հալոցքին արի ու մտիկ ջեր-
 մոց՝ վարունգի բոլոր ծաղիկները հատ-հատ մտցրու դեղի
 սրվակի մեջ, որ որդը մոտ չգա: Հիմա ջերմոցի տապից

Սկսեց մեկ-մեկ ջոկել պոմիդորը, հետո էլ, թե. «Իսկ կա վրան,
 բանի պետք չէ»: Ինքը նայեց կնոջ երեսին ու լեզուն չզսպեց.
 «Քո երեսին էլ խալ կա, դու է՛լ բանի պետք չես»:

Կինը ձենը գրկով գցեց, ողջ շուկան գլխին հավաքեց, նրա
 հարյուր խոսքին ինքը իսկի մեկով էլ չէր պատասխանում, բայց
 բանը չավարտվեց, մինչև կինն ամուսնուն չխառնեց իրենց վե-
 ճին...

Հիմա հոգնել է, չի ուզում մի քանի դրամ ավելի վաստակե-
 լու համար գիշերը շուկայում լուսացնել ու ապրանքը տալիս է
 միանգամից: Գալիս, արտի մոտ խոսում, առնում, տանում են:
 Միջնորդներն իրենից են առնում, տալիս են վերավաճառող-
 ներին: Իսկ կինը դրան համաձայն չէ: Ու ոնց որ Արամն էլ մոր
 կողմից է: Այսօր էլ կանգնել, լռել էր, չէր խոսում. իբր՝ դուք գի-
 տեք, ես ձեր մարդ ու կնոջ վեճից մաս չունեմ: Տասնվեց տա-
 րեկան տղա է, ամեն ինչ հասկանում է ու եթե մորը չի ասում.
 «Ա՛յ մեր, էս մարդուն հանգիստ թող», - ուրեմն մոր կողմից է:

Մկոն վախենում էր նույնիսկ ինքն իրեն խոստովանել, որ
 կնոջից նեղանալու պատճառն այսօրվա վեճը չէր, այլ դրա
 տակ թաքնված, հազար ծածկոցով փաթաթված ուրիշ բան:


Ամուսնությանը հաջորդող մի քանի տարում հաշտ ու սիրով
 էր եղել կնոջ հետ, հետո միանգամից հիասթափվել էր ու...
 Սկզբում մտածում էր՝ հերթական սիրաթափություն է, կանց-
 նի, բայց հիասթափությունն անցնելու փոխարեն խորացել էր,
 ու հիմա սիրտը սառն ու անտարբեր էր Զարուհու նկատմամբ:

«Ի՞նչ էլ խուճուճ անուն ունի», - փնջացրեց նոր վառած ծխա-
 խոտի ծխի միջից ու աչքի մեկը կկոցեցրեց՝ նայեց Արարատին:
 Արագիլը, թևերը լայն բացած, սավառնում էր օդում: Լեռան
 գագաթից մինչև Մկոյի բաց աչքը թանձր շամանդաղ էր, և
 թվում էր՝ արագիլն իր թևերով կտրում է այն, հենվում է օդի
 թանձրության վրա ու ճախրում: Օդը նրա համար հենարան է,
 բույնը՝ նույնպես, ու նա իրեն չխնայելով աշխատում է: Տեսնես
 արագիլի համար թռչելը հաճո՞ւյք է, թե՞ պարտականություն,
 տեսնես արագիլը վիրավորվել, թախծել, նեղանալ գիտի՞, թե՞
 նրա համար կյանքն անջանք, անտառապանք թռիչք է: Տեսնես
 արագիլն իր կյանքից հաճո՞ւյք ստանո՞ւմ է, թե՞ ապրում է միայն
 ճահիճ-բույն տարածությունը կտրել-անցնելով:

Հիմա արդեն զոջացել է, որ տասը տարի առաջ չթողեց-հե-
 ռացավ: Մտածեց էրեխեքի մասին, մտածեց՝ ինքն անհեր է մե-
 ծացել, թող տղան հոր քաղցրություն ճաշակի: Սակայն այն
 ժամանակ չէր հասկանում, որ եթե բույնը սիրով չտաքանա,
 այնտեղ ծագերն անպայման կմրսեն: Դրա համար էլ իրեն
 գրկում ու նրանց քմահաճույքն էր կատարում:

- Արա՛մ, - առանց իմանալու, թե տղան որտեղ է, ձայն տվեց
 նա:

- Հա՛, - ուշօրեք եկավ պատասխանը:
 - Արի՛:
 Արամը եկավ՝ բոյով, երկարուն, իսկը կիվկիվի ձագ: Կա
 նման մի թռչուն, գրական անունն ինչ է՞ չգիտի, բայց կա՛ եր-
 կարոտն, երկար կտուցով, բարակ վզով:
 - Արա՛մ, կիվկիվի ի՞նչն է երկար, - արդեն քանի՞ տարվա
 սովորությամբ հարցրեց հայրը:
 «Է՛, պա՛պ», - ուզում էր դժգոհել տղան, բայց սովորույթի ու-
 ժը հաղթեց, ու կիսաբերան պատասխանեց.
 - Ուտքերն ու կտուցը:
 - Ապրե՛ս, - ժպտաց հայրը, - քանի՞ ամիս է, որ քեզ համար
 հարմուն են առել:



Սամվել ԽԱՆԱԹՅԱՆ

2020: Թիվ՝ մահ տարածամի

Սև ու սգավոր տարի եղավ 2020-ը:

Քովիդն իր հերթին, աշնանից՝ պատերազմն իր հերթին, այդ ընթացքում պետական քարոզչության անհասկանալի, սնամեջ պարծենկոտությամբ ժողովրդին խաբելը, թե՛ հաջողությամբ ետ ենք մղում թշնամուն, այնինչ հազարներով մատաղ կյանքեր էին գոհասեղանին մատաղվում՝ անօրինակ սխրանքներով, բայց... ապարդյուն: Անըմբռնելի մի ձեռնածուխով ամոթալի պարտությունն ընդունելն իր հերթին, տարածքների կորուստ, հարյուրավոր գերիներ, անհայտ կորածներ և անտերունջ տառապանք... Ո՞րն ասես: Սեպտեմբերի 27-ից ի վեր, ամեն օր, ամեն ժամ՝ կարկուտի պես տեղատարափ բոթ, գույժ, տագնապ, վիշտ, արցունք:

Այս ամենը բացահայտեց մեր երբևէ չերևացած, դեռ չգիտակցված ԵՍ-ի նոր դրսևորումներ ու կողմեր: Շատերը, նրանց թվում՝ մտերիմներ և նոյնիսկ հարազատներ ու արյունակիցներ, հանկարծ հառնեցին իրենց հոգու և գիտակցության ողջ մերկությանը՝ լավ ու վատ որակներով, որոնց մասին գուցե չէինք էլ իմանա և գիտակցի՝ մինչև մեր մահն ու Վերին դատաստանը, եթե չլինեք այս արհավիրքը:

Ցավալին այն է, որ մինչև այժմ չգիտակցված և համաժողովրդական աղետի ցնցումից միայն ի դերև եկած մեր նորորակ ինքնությունը, երևակվեց սև ու սպիտակի (չզփոթել Նիկոլի գունաբաժանման հետ) հակընդդեմ կողմերում: Ազգն ալեկոծվեց այնպես, ինչպես խորտակվող նավի երկու կողերի ալիքներն են միմյանց բախվում: Այդ բախումից առաջացել է ամենակուլ մի ջրապտույտ, որից եթե չխուսափենք, կործանվելու ենք: Ժողովուրդը դեռ մաքառում է՝ հենված տապալված կայմին, նավապետը կառչել է դեկից՝ իրեն փրկելու հույսով, երկնակամարում ուղեցույց աստղեր չեն երևում, և աղմկալից այս քառսում վերաթթանում է Քերթողահոր հոգի ծվատող Ողբը՝ սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավաքը ծախվում է ունայն կյանքի համար, սպառազանքներ են գալիս անհատներ, շարտերի վրա, փնտրվում են, սրացվածքները հափշտակվում... առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմապես համաճարակներ... Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած...

Մինչդեռ, քաղաքական հողմերն ավելի են արագացնում ջրապտույտի ուժը: Վերջին հույսով աչքներս հառել ենք փրկողական նետողի: Միրաժով երևացող փրկողական վրա մե՛կ պարսկերեն, մե՛կ անգլերեն, մե՛կ ռուսերեն գրեր են երևում, հուսահատության մեջ մոռացնել տալով մերը՝ ամենափրկիչ Մեսրոպյանը: Հուսով եմ, որ եկող տարում կսկսենք սերտել հայոց այբուբենը:

ԿԻՎԿԻՎԻ Ի՞ՆՉՆ Է ԵՐԿԱՐ

- Հարմոն չէ, պա՛պ,- դժգոհությունը մի Սկիզբ էջ 5 կերպ ծածկեց Արամը:
- Լավ, ակորդեոն:
- Ակորդեոն էլ չէ:
- Բա՛...
- Արգան:
- Լավ, թող արգան լինի,- կրկին դիտմամբ աղավաղեց անունը:
Արամը գիտեր, որ խմած ժամանակ չարժե հոր հետ գլուխ դնել ու «Հինգ ամիս»,- պատասխանեց խեղճ-խեղճ:
- Մի՛ խեղճանա,- տղայի վրա գոռաց հայրը,- մի՛ խեղճանա, տղամարդը ճարպիկ կլինի: Քանի ամի՛ս...
- Հինգ:
- Լավ: Էդ հինգ ամսում մի անգամ քո հոր համար նվագած կա՛ս:
- Չէ՛:
- Դե գնա, արգամիդ քաշ տուր էստեղ: Ես ուզում եմ, որ նվագես, ու ես լսեմ, հոգիս փառավորվի: Նվագել գիտես, չէ՞: Քանի՞ ամիս սովորեցիր էջմիածնեցու մոտ:
- Չորս ու կես:
- Ապրես, դե գնա, բեր:
Արամի քայլը չուզողի էր: Նայում էր հայրը նրա թիկունքին ու դրա վրա կարողում դիմադրություն: Ոտքերը քառատնվեց համար՝ քըստ-քըստ քերում են հատակը: Թե՛ հնար ունենա, դրանք կխրի հատակի մեջ ու չի շարժի: «Հիմի մի մատ լակոտ է,- նրա երկու մետրանոց հասակը չափելով՝ մտածեց հայրը,- ու չի ուզում ենթարկվել, բա որ հասունանա, էլ հետը խոսե՛լ կլինի»: Չէ՛, Արամը իրեն հասկանալ չի կարող: Արամը «Կերել է հացի բուշտը, պառկել է նախ կոշտը»: Կյանքում բարձրացրած ամենամեծ ծանրությունը վարունգ սրսկելու սրվակն է եղել, մեկ էլ էլեկտրական սինթեզատորը, որ բերում է ակամա, չուզելով:
Տղան սինթեզատորի ճամպուկը դրեց հատակին ու կանգ առավ պատշգամբի մեջտեղում՝ հայացքը հոր երեսին հառած: Իբր՝ բերեցի, հիմա ի՞նչ անեմ:
- Ի՞նչ ես շշմել,- խեղճեց հայրը,- բաց հարմոնը:
Տղան երկար ու դողացող մատներով բացեց ճամպուկը, միացրեց հոսանքը և սպասեց:
- Նվագիր,- թախտին պառկելով հրամայեց հայրը:
- Ամոթ չէ՛, հարևաններն ի՞նչ կմտածեն,- վերջին բարիկադի հետևը մտավ Արամը:
- Հարևանները... Հարևանը որ մեր տանից նվագի ծայն լսի, ամոթ է: Ա՛յ, եթե հայիտյանքի ծայն առնի՛ ամոթ է: Եթե տեսնի, որ դու ինձ չես լսում, էլի, որ մորդ փնթի շորերը տեսնի, ամոթ է, նրա անսանրել մազերը տեսնի՛ դարձյալ: Իսկ որ քո նվագը լսի, զգա՛ հորդ սիրտը ոնց է փառավորվում, կնախանծի: Կասի՛ երանի Մկոյին, որ Արամի պես տղա ունի:
Արամի երկար մատները սահեցին ստեղների վրայով: Գործիքը նվագողի մատների փայտացած դիմադրությունն զգաց ու սկսեց անկանոն ծայներ հանել: Մատները կամաց-կամաց իրենց հաղթահարեցին և անվարժ ինչ-որ եղանակ փաթաթեցին Մկոյի լսելիքին:
- «Դէ յաման» նվագիր,- սրտի թախիծի հանգույն պատվիրեց հայրը:
- Էդ ո՞րն է,- աչքերը տարակուսած չուց որդին:
- Վա՛յ, քո դաս տվողի,- հայիտյանքի շարանը կու տվեց Մկոն,- ես հողագործ մարդ եմ ու հասկանում եմ, որ Մասիսի առաջ, ինձ նման կտորված սրտով հայի տղան «Դէ յաման» նվագել պիտի իրմանա, ու ինքը չի՛ իմանում: Քանի՞ հարյուր դուրս տվեցիր դասատուիդ,- իր իմացածը տղայի բերանով հաստատել ուզեց նա:
- Չորս:
- Հա՛,- խորդաց նա և ձեռքը դարձյալ ծխախոտին մեկնեց:
Արամը կանգնել էր ձեռքերը կողերից կախ գցած, դասը չիմացող աշակերտի պես:
- Լավ, «Պարոնժողով» նվագիր կամ գոնե «Արա վայ-վայը»: Թող երգը թնոս, ու քո հոր սիրտն ուրախանա:
Արամի մատներն ածծեցին, ինչ-որ կիսատ-պռատ եղանակ դուրս բերեցին, և Մկոյի սիրտը լցվեց:
Լավ, մի՛ նվագիր: Ով էլ էս կարգի նվագ լսի մեր տանից, իմ երեսին կթքի: Ամոթ է, սատանի ձեն է հանում քո արգամը:
Չէ՛, Արամն իրեն չքաշեց: Իր ցեղի խելառ-տաքարյունության փոխարեն սա մոր կողմի անտարբեր-դանդալոշության գերին է: Ամեն ինչ անում է դանդաղ, անհավես, ասես չուզելով: Ապրում է այնպես, կարծես հավիտենական տապի տակ է: Ի՞նչ ասես, արևն այնքան է այրել աներանց տոհմի յոթ պորտի գլուխը, որ ուղեղը դարձել է սմբած, ջրի կարոտ սպունգ: Իսկ զոքանչը նայում է Արամի բոյ-բուսաթին, երկար ոտ ու ձեռն ու հրճվում է բարձրածայն. «Մեռնեմ բոյ-բուսաթին, հռճուլ ա, հռճուլ...»:
Այդպես էլ ո՛չ ինքը գիտի, թե հռճուլն ինչ է, ո՛չ էլ ուրիշներին է կարողանում բացատրել: Ամեն լսող թող իր երևակայության համեմատ պատկերացնի հռճուլի ինչ լինելը:
Իսկ տատի հռճուլն ահա տանջում է գործիքը, տանջում է իրեն, տառապում, բայց չի կարողանում իր երկար մատների տակից մի խելքը գլխին երաժշտություն հանել:

- Էդ նվագը մենակ տատիդ դուր կգա,- ծիծաղել փորձեց Մկոն,- կնվագես, ու ինքը մորդ ու քեռուդ հետ կպարի: Մեկ է, ո՛չ խելք ունեն, ո՛չ լսողություն:
«Տատը քեզ ի՞նչ է արել», - ուզում էր դիմադարձել Արամը, բայց չհամարձակվեց, մանավանդ գիտեր, որ հոր այդ հանդարտ-հանգստության տակ փոթորիկ է հասունանում: Մկոն ելավ թախտից, մոտեցավ բաց պատշգամբի բազրիքին:
- Արի՛,- հանգիստ դիմեց տղային:
Արամը դանդաղ մոտեցավ, կանգնեց հոր կողքին ու նայեց ներքև: Հայրն ուշադիր նայում էր, կարծես ինչ-որ չհայտնաբերած բան էր տեսել: Ներքևում բետոնե հատակն էր, կենտրոնում՝ մարմարե քարով սարքած բազմաթերթ ծաղիկ: Ինքն իր ձեռքով էր հավաքել՝ բանջարանոցի աշխատանքից ազատ ժամերին: Հավաքել էր թերթ առ թերթ, քար առ քար: Արամին ի՞նչ: Անցնում էր վրայով ու չէր մտածում հոր այդ ժամանակ ցաված ծնկների մասին: Արամի մորն ի՞նչ, հո իր մատները չէին կերել ավազն ու մարմարը: Ինքն ալարում էր, որ կռանար, ավելի բակն ու նրա վրա բացված մարմարե ծաղիկը:
- Էկա՛ր,- դարձավ տղայի կողմը:
Տղան լուռ էր:
- Սաքսաֆոնդ մոտ բեր,- փնջացրեց:
- Սաքսաֆոն չի,- թույլ դիմադրեց Արամը:
- Էլեկտրական սինթեզատորը,- հատ-հատ շեշտեց Մկոն:
Արամը կտորվող ծնկներով պատշգամբի խորքից բազրիքի մոտ բերեց գործիքը:
Մկոն վերցրեց, նշան բռնեց մարմարե ծաղիկին ու բաց թողեց:
- Վա՛յ,- անբնական ծայնով ծղրտաց տղան:
Երգեհոնն ընկնելիս յուրատեսակ շվճոց հանեց, բախվեց ծաղիկին:
- Յա՛,- զարմացավ Մկոն,- էս ինչի՞ ձեն չի հանում:
Արամը մի շնչում հասավ բակ ու սկսեց արագ-արագ հավաքել երգեհոնից թռած փշրանքները:
- Բեր վերև,- կոշտացավ հոր ձայնը:
Տղան մեկ-մեկ հավաքեց ցանուցի եղած բեկորները, բարձրացավ վերև ու դրանք լցրեց հոր ոտքերի առջև:
- Ահա՛,- փնջացրեց՝ իր ողջ դժգոհությունը դնելով այդ մի հատիկ բառի մեջ:
Մկոն նայեց Արամի արցունքոտ աչքերին, հուզմունքից կարմրած դեմքին, աստիճանները վազեցված բարձրանալուց հետո բերանին: Այդ պահին Արամը և՛ նման էր ինքն իրեն, և՛ տարբեր: Ուզում էր լացը զսպել՝ իբրև թե արդեն մեծ տղա եմ, ամոթ է լաց լինելը, բայց չէր կարողանում: Հևում էր ընդհատ-ընդհատ, և արցունքները այտերն ի վար գլորվում էին ներքև:
«Չլինի՛ էս էրեխեն սրտի հետ կապված հիվանդություն ունենա,- անցավ մտքով,- կարելի է մի անգամ բժշկի տանել»: Բայց հետո իրենից ետ հրեց այդ անպատեհ ժամին տագնապ պատճառող միտքն ու դարձավ տղային:
- Տուր տեսնեմ, ի՞նչ է մնացել սինթեզատորիցդ, հռճուլ:
- Ես հռճուլ չեմ,- այլևս իրեն զսպել չկարողացավ ու ծայնը գլուխը գցելով՝ լացեց Արամը:
Հայրը ուշադիր զննեց գործիքը:
- Մալադե՛ց,- պատրաստողների հասցեին նետեց նա,- լավ էլ ամուր են սարքել: Կտանենք, սարքել կտանք:
- Էլ սարքել չի լինի՛...
- Ախր որ կարգին չես նվագում, սա քո ինչի՞ն է պետք,- դարձյալ զայրացավ հայրը:
Տղան լուռ էր: Հայրը նորից զննեց կիսաջարդ գործիքը, խորդաց՝ կոկորդը մաքրելու համար և դարձյալ նշան բռնելով երիցուկի ծաղկաբաժակին՝ ցած նետեց երգեհոնը:
- Լավ էլի, պա՛,- հուսահատ ճչաց տղան:
Մկոն ուշադիր նայեց սալահատակի վրա փշուր-փշուր եղած սինթեզատորին, նոր սիգարետ վառեց ու նայեց Մասիսին: Սարի վրա շամանդաղը խտացել էր ու փորձում էր ամպ դառնալ: Այդ կիսամալ-կիսամշուշ գոյացությունը փորձում էր բարձրանալ, հասնել սարի գագաթին ու չէր կարողանում:
Դրսում տղան մեկ-մեկ հավաքում էր սինթեզատորի կտորտանքն ու հեկեկոցով մորը պատում էր եղածը: Մայրը չէր համարձակվում բարձր խոսել ու շշուկով համոզում, թե՛ հանդիմանում էր որդուն:
Պառկել էր թախտի վրա, և թախտի՞ ծանր ու թթվաշ, սեղմում էր կոկորդը:
Ելավ տեղից, առանց դուրս նայելու ծայն տվեց:
- Արա՛մ:
Տղան չարձագանքեց: Հայրը ուշորեք լսեց աստիճաններով բարձրացող քայլերի ձայնը: Եկավ, գլուխը կախ կանգնեց հոր առաջ:
- Հա, պա՛պ:
- Ասա՛ կիվկիվի ի՞նչն է երկար:
- Ոտքերն ու վիզը,- հեկեկաց Արամը:
- Լավ, մի՛ գոռա,- կոշտացավ հայրը:
- Որ լացս գալիս է, ի՞նչ անեմ,- իրեն զսպել չկարողացավ ու հեկեկաց տղան:
- Պատրաստվիր,- ժպտաց Մկոն,- վաղը գնում ենք Երևան՝ նոր սինթեզատոր առնելու:

Անլիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Օրերս Բելգրադում հեղինակավոր «Պեշիչի սինովի» հրատարակչությունը սերբերենով լույս ընծայեց Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»՝ ՍԵՐԲԵՐԵՆ

ակնարկը գրված է մեր կողմից: Նրանում ասվում է, թե 405 թվականին Մեսրոպ Մաշտոցը, կաթողիկոս Սահակ Պարթևի և Հայաստանի արքա Վռամշապուհի օժանդակությամբ ու քաջալերմամբ, ստեղծեց հայոց այբուբենը:



հայագետ Ժան-Պիեռ Մահեն, ով 1993-ին տպագրել է Խորենացու պատմության ֆրանսերեն խորագրված թարգմանությունը, Վիստոն եղբայրների թարգմանության մասին ասել է. «Եվրոպայի գերազանց մտքերը տեսան ուժեղ հետաքրքրություն առաջացնող անկախ մի պատմագրություն»:

Խորենացու «Հայոց պատմությունը» ամբողջական թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, հունգարերեն, պարսկերեն, անգլերեն, վրացերեն, արաբերեն, թուրքերեն, որոշ լեզուներով՝ մի քանի անգամ: Մեծ պատիվ է հայ մտավորականության համար, որ այդ հանճարեղ գիրքը թարգմանվում է հայ ժողովրդի համար այնքան սիրելի ազգի՝ սերբերի լեզվով:

ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ՍԵՐ՝ ՍԻՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿՆԻ



Այսօր ընթերցողի գրասեղանին է Սամվել Մարգարյանի սիրային ստեղծագործությունների ընտրանին՝ «Տիեզերական սեր» գիրքը, որտեղ զետեղված են հեղինակի լավագույն ստեղծագործությունները՝ գրված վերջին տասնամյակներին:

«Տիեզերական սեր» գրքում բանաստեղծը նոր ուժգնությամբ է հնչեցնում սիրո քնարը, փառաբանում մարդկային հոգիները, սրտերը, երկինքն ու երկիրը, տիեզերական մարմինները շաղկապող սերը: Նա հույսով ու հավատով, վառ երազանքներով է դիտում տիեզերական հեռաստանները և համոզված է, որ տիեզերքում ապրում են աստվածատուր տաղանդով օժտված բանական մարդիկ, արարածներ: Տիեզերքում է բնակվում աստղային, հավերժական Սերը, որը գալիքում մի օր գալու է Երկիր մոլորակ և փրկելու է մարդկանց ախտերից ու աղետներից:

Թամարա ՄԵԼԻՔՅԱՆ
Բան. գիր. թեկնածու



- Կաղանդ Պապ, կներես, որ գրույցը հեռահար է, երևի գիտես ինչու:
- Հիմա ամեն ինչն է հեռահար:
- Ամեն ինչը՝ ի՞նչը:
- Սիրելի, ատելի, քնելի, ուտելի, մի խոսքով, ամեն ինչը:

- Ռուսների համար մեր հողերը միշտ էլ խոտ են եղել:
- Թուրքերի ախորժակը փուչիկի պես ինչքան փչես, մեծանում է... Սյունիք են ուզում, Սևանում լողանալ են ուզում:
- Ճիշտ է, որ փուչիկն ինչքան փչես՝ կմեծանա, բայց չափն անցար՝ պայթում է:
- Դրանց փուչիկն իրենց կաշվի պես պինդ է:
- Ամեն ինչի չափն անցար, ի վերջո պայթում է:
- Ենթադրում ես, թե՛ հավատում, որ դրանց փուչիկն էլ է պայթելու:
- Իմ խոսքը խոսք է:
- Երանի շուտ պայթեր:
- Վռագողի կինը տղա չի բերում:
- Պա՛պ, երևի այս տարի քեզ համար էլ լավ չլինի: Ամեն ինչ խառնվել է իրար, Ամանորի լույսերի փոխարեն ամենուր անորոշության լամպերն են, ժողովուրդը բաժանվել է սպիտակների ու սևերի, հայրենասերների ու դավաճանների, կեսը վարչապետի հրաժարականն է պահանջում, կեսը պաշտպանում է վարչապետին, ընկճախտը մա-

ՀԵՌԱՀԱՐ ԶՐՈՒՅՑ ԿԱՂԱՆԳ ՊԱՊԻ ՀԵՏ, ՏԱՐԵՄՈՒՏԻՑ ԱՌԱՋ

- Հո կորոնավիրուսով չէ՞ս վարակվել: Թեստ հանձնե՞լ ես: Որ Հայաստան մտար, թեստավորելու են, պատասխանը դրական եղավ, մինչև հին Նոր տարի մեկուսացնելու են: Առանց առաքելությունը կատարելու վերադառնալու ես:
- Դրական չի լինի:
- Ի՞նչ գիտես:
- Պինդ եմ, առողջ եմ, եռանդով լիքը:
- Էդ վարակն առանց ախտանիշների էլ է լինում: Դու էլ, տարիքդ հաշվի առնելով, ռիսկի խմբում ես ու հնարավոր է...
- Ի՞նչ ես ակնարկում...
- Ընդամենը, որ դիմակը չմոռանաս:
- Ուրիշ թեմա չունե՞ս:
- Ասացիր՝ աշխարհում հիմա ամեն ինչ հեռահար է:
- Էլի եմ ասում:
- Բա ո՞նց է, թուրքերն այնքան մոտեցան Արցախին, որ նույնիսկ հայերը տեղ-տեղ ստիպված էին նահանջել:
- Ասածս նախիրին չէր վերաբերում:
- Խոսքս թուրքերի մասին է:
- Հա՛, էլի...
- Որ նախիր են, ինչո՞ւ աշխարհում տասնյակ ազդեցիկ նախարարներից ոչ մեկը չփորձեց նախիրը ետ քշել:
- Երբեմն նախիրն ու նախարարն նույն ջուրն են խմում: Նախարարները զգուշանում են, որ նախիրը հանկարծ ջուրը չպղտորի:
- Բայց գոռում-գոռոռում էին, որ նախիրը ետ կանգնի:
- Մինչև մահակը ձեռքդ չառնես, գոռալով անասունի վրա չես ազդի:
- Բայց ոչ մեկը մահակ չվերցրեց:
- Որ իրենց ընդհանուր ջուրը չպղտորվի: Խոսքս ընդհանուր շահի մասին է:
- Արդարություն չկա՞:
- Քաղաքականության մեջ արդարությունն ընդամենը վիճակախաղ է:
- Որ վիճակախաղ է, ո՞նց է, որ ամեն անգամ շահողները նույնն են:
- Քաղաքական վիճակախաղում շահում է, ով ուժեղ է:
- Բա թույլերը...
- Խաղում են, որ ուժեղները հաղթեն:
- Չեղավ, Կաղանդ Պապ... Նախիր դեմը չառնես՝ սրբություն չի թողնի:
- Դեմն առնելու ուրիշ ձև էլի կա:
- Ո՞նց:
- Առաջը շատ խոտ պիտի լցնես, ոնց որ ռուսներն արեցին:
- Ռուսները մեր հողերը տվեցին:

ռախուղի պես իջել, մարդկանց աչքերից խլել է ապագայի լույսը: Զոհվածներ, անհետ կորածներ, գերիներ...

- Չշարունակես:
- Հրապարակում էլ տոնածառ չի լինելու: Այնպես որ, այս տարի երևի չգաս, ոչ մեկը տոնի ու ուրախության տրամադրություն չունի:
- Բա երեխաները: Պետք չէ մեծերի ձախողումները երեխաների ուսերին բարդել: Ոչ մեկն ընկնելու չունի երեխաներից խլել իրենց ուրախությունը: Միայն նրանց երջանկություն պարզաբերել է հնարավոր նահանջ տարվա նահանջը կանգնեցնել: Պայծառատես չեմ, բայց վստահ եմ պատմությունը չի կրկնվելու ազերիների ու թուրքերի սցենարով:
- Լավատես ես, Պա՛պ... Ո՞ր հայը չէր ուզի Հայաստանը հուսահատության ու աշխարհի հոգսերից ազատված տեսնել:
- Էլի կրկնե՞մ, որ վռագողի կինը տղա չի բերում: Քո սերունդը հնարավոր է չտեսնի, բայց պահն այնքան էլ հեռու չէ, երբ ազերիների ու թուրքերի աստղը կմարի, և չարիքի կայսրությունը կկործանվի:
- Էդ ո՞նց, Պա՛պ, ի՞նչ գիտես, որ մենք չգիտենք:
- Չարենցն է ասել, որ հայերի փրկությունը իրենց հավաքական ուժի մեջ է:
- Կարդացե՞լ ես:
- Բոլորին էլ կարդում եմ, նույնիսկ սկսնակներին: Պիտի համախմբվել, պիտի զինվել, պիտի հզորանալ: Նվճվողով առաջ չես գնա, հուսահատությունը հաղթանակի դրոշ չի լինի: Պիտի ասավինել սեփական ուժերին ու Աստծո շնորհած առաքելությանը:
- Նույնը ասում ենք, կրկնում ենք, բայց սայլը տեղից չի շարժվում:
- Առանց հավատի՞ խոսքը քամի է: Պիտի գործել արածիդ նկատմամբ հավատ ունենալով, ոչ թե լույսի առաջն ընկնել, այլ՝ լույսի հետևից գնալ, որ ստվերները չխանգարեն: Գուցե ձեր սերնդի համար դժվար լինի, շատերն ընչաքաղցությունն ու ազահությունը երկրորդ մաշկ են դարձրել, բայց երեխաները կհասցնեն հայի երազանքն իրականություն դարձնել: Այնպես որ, գալու եմ և երեխաներին ուրախություն ու հավատ եմ բերելու:
- Իմանաս, ո՞նց եմ ուզում, Պա՛պ, որ հրապարակում տոնածառի փոխարեն քո լավատեսությունը երեխաներին իր շուրջը հավաքի:
- Մի՛ ուզիր, հավատա: Ամեն ինչ առջևում է... Մինչև հանդիպում:

Զրուցեց Սամվել ԿՈՍՅԱՆԸ

Վարպետը միշտ մեզ հետ է

Ավետիք Իսահակյանի ծննդյան 145-ամյակին նվիրված գիտաժողով

Դեկտեմբերի 17-18-ին Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ «Ավետիք Իսահակյան-145» գիտաժողովը: Այն հեռարձակվեց առցանց՝ ուղիղ միացմամբ թանգարանի ֆեյսբուքյան էջով, որին հնարավորություն ունեցան հետևելու իսահակյանասերներ, հազարավոր հետևորդներ ոչ միայն հայրենիքից, այլև աշխարհի տարբեր երկրներից: Գիտաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել բանասիրության դոկտորներ, երիտասարդ գրականագետներ և այդ ասպարեզում իրենց առաջին քայլերն անող հետազոտողներ: Զեկուցողներ կային Գյումրուց, Վանաձորից, Իջևանից, Էջմիածնից:

Գիտաժողովը յուրահատուկ սեմինարի բնույթ էր կրում, քանի որ յուրաքանչյուր զեկուցումից հետո տեղի էր ունենում ակտիվ քննարկում, կարծիքների և մտքերի փոխանակում: Եզակի էին մեկնաբանությունները, լրացումներն ու առաջարկությունները, մանավանդ երիտասարդ իսահակյանագետներին՝ տրված պրոֆեսոր Ավիկ Իսահակյանի կողմից: Առաջարկ եղավ «Արու-Լալա Մահարի» անմահ գրական կոթողը աշխարհին ներկայացնելու 12 լեզվով՝ ամփոփված մեկ գրքում: Առաջարկի հեղինակը ԳԱԱ թղթակից անդամ, Բ.Գ.Պ. Ավիտա Դոլուխանյանն էր (թեմա՝ «Արու-Լալա Մահարի» պոեմի առաջին ֆրանսերեն թարգմանությունը): Գիտական և արժեքավոր զեկուցումներով հանդես եկան պատմաբան, պ.գ.թ. Կարինե Բազեյանը («Շիրակի ազգագրությունը Իսահակյանի արձակում»՝ կարևորելով Իսահակյանի ստեղծագործության մեջ առկա ազգագրական հարուստ նյութը), Բ.Գ.Պ. Վազգեն Համբարձումյանը («Բառի պատկերազրույցումը Ավետիք Իսահակյանի վաղ շրջանի չափածոյում»), պրոֆեսոր Վլադիմիր Կիրակոսյանը («Կինը և սերը Իսահակյանի ստեղծագործության մեջ»), Բ.Գ.Պ. Սուսաննա Հովհաննիսյանը («Ավետիք Իսահակյանի մասին հուշագրության էջերից»), Վալերի Փիլոյանը («Իսահակյան-Հրանտ Մաթևոսյան. ժառանգորդության հարցեր»), Վաչագան Ավագյանը («Ավետիք Իսահակյանի և Արշակ Չոպանյանի առնչություններից»), Էմմա Թեմրազյանը («Ավետիք Իսահակյան և Հովհաննես Մասեհյան. հանճարեղ բարեկամությունը»), Քնարիկ Ավետիսյանը («Ավ. Իսահակյանի «Արու-Լալա Մահարի» պոեմի նկարագրողությունը»), Բ.Գ.Պ. Աշոտ Գալստյանը («Ավ. Իսահակյան. բնորոշ հուշագրության մեջ»): Ուշագրավ էին երիտասարդ բանասիրության մեկնաբանություններն ու դիտարկումները՝ Լիլիթ Սեյրանյան, Արմեն Մանուկյան, Նունե Մկրտչյան, Անի Ղազարյան, Անահիտ Ղարիբյան, Շողեր Խաչատրյան, Լուսինե Սահակյան, Լուսինե Հայրիյան, Անի Փաշայան: Գիտաժողովին մասնակցեցին տուն-թանգարանների ներկայացուցիչներ՝ Կարինե Քոչար (երվանդ Քոչարի տուն-թանգարան), Անուշ Թասալյան (Եղիշե Չարենցի տուն-թանգարան), Քրիստինե Աբրահամյան (Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան): Առանձնահատուկ հետաքրքիր էր լսել Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ավիկ Իսահակյանին. զեկուցման թեման էր՝ «Ավետիք Իսահակյանը հուշագիր»: Խոսելով Վարպետի՝ հայ արվեստի և գրականության երևելիներին վերաբերող հուշերի մասին՝ գրականագետը շեշտում է, որ այստեղ զետեղված նյութերը սկզբնաղբյուրային արժեք են ներկայացնում: Գիտաժողովի ընթացքում Ավիկ Իսահակյանը ներկայացրեց Իսահակյանի ակադեմիական հրատարակության 13-րդ հատորը, որտեղ զետեղված էին նշված հուշերը:

Այս գիտաժողովը մեկ անգամ ևս հաստատեց, թե որքան արդիական ու մեծ է Ավետիք Իսահակյանի աշխարհընկալումն ու խորիմաստ՝ փիլիսոփայությունը. «Հայ ժողովուրդը չմեռնող ժողովուրդ է, որքան էլ որ նա փոքրանա՝ նա պիտի հետապնդե իր դատը իր խոսքով, իր արվեստով, իր գրականությամբ և իր գեներով և արյունով...»:

Ռուզաննա ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի
հանրահոշակման բաժնի վարիչ

Գրական Թերթ Գլխավոր խմբագիր՝ **Կարինե ԽՈՒԴԻՎՅԱՆ**

ԽՄՔԱԳՐԱՎԱՆ ԽՈՐՀՈՒԲ:

Նորայր Արայան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Գեմիրճյան, Անիտա Դոլուխանյան, Ազատ Եղիազարյան, Գորգեն Խանջյան, Սամվել Կոսյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրաչյա Մարիքեյան

Հրատարակում է «ԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրությունը» ՍՊԸ- ճ: Վկայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ: Տպաքանակ՝ 1000: Գինը՝ 100 դրամ: Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ:

Ելուցները ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարգիչի հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտատպության դեպքում հորմը «Գրական թերթին» պարտավոր է: Թերթը տպագրվում է պետական մասնակի աջակցությամբ: Տպագրությունը իրականացրել է «Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ- ճ: ՀԳՄ «Լ. Չ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը:

0019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakan-tert@yandex.ru, grakantert@gmail.com